Ազգ
Azg
17 ՅՈՒԼԻՍ 2013 ՉՈՐԵՔՇԱԲԹԻ 121(5204)
ISSN: 1829-1651

# Թուրքիան «մտա՞վ» Հարավային Կովկաս

ՎԱՀՐԱՄ ԱԹԱՆԵՍՅԱՆ

Haqqin.az-ի տեղեկագրմամբ՝ երեկ Ադրբեջանի ՊՆ «Գարահեյբաթ» ուսումնավարժական կենտրոնում, որ գտնվում է Բաքվի մերձակայքում, «տրվել է թուրք-ադրբեջանական համատեղ զորավարժությունների մեկնարկը» (տես http://haqqin.az/news/7556): Զորավարժությունների բացմանը հանդես է եկել Ադրբեջանի ՊՆ գլխավոր օպերատիվ վարչության պետ գեներալ-մայոր Էյվազ Ջաֆարովը՝ նշելով, որ «Թուրքիայի եւ Ադրբեջանի միջեւ հարաբերությունները գտնվում են ամենաբարձր մակարդակի վրա»:

Ադրբեջանցի գեներալի գնահատմամբ, «առաջին անգամ անցկացվող լայնածավալ համատեղ զորավարժությունները բարձր մակարդակի համատեղ որոշման արդյունք են, դրանց անցկացմամբ կողմերը կատարում են երկու պետությունների ղեկավարների կարեւոր հանձնարարությունները»: Գեներալ Էյվազովը թուրք-ադրբեջանական համատեղ զորավարժությունները գնահատել է նաեւ որպես «տարածաշրջանային կայունության ապահովման նպատակ հետապնդող» քայլ:

Ըստ ամենայնի՝ վերջին ձեւակերպումն էլ հենց բնութագրում է Թուրքիա- Ադրբեջան ռազմական համագործակցության հիմնական նշանակությունը: Այդ առթիվ քաղաքագետ Վաֆա Գուլուզադեն կարծիք է հայտնել, որ «փաստորեն ՆԱՏՕ-ն նպատակադրվել է Հարավային Կովկասում ներկայություն ապահովել»:

Որքանո՞վ է Թուրքիան Ադրբեջանի հետ իր ռազմական համագործակցությունը համաձայնեցրել ՆԱՏՕ-ի հետ՝ դժվար է ասել: Փաստ է, սակայն, որ «համատեղ զորավարժությունների» անվան տակ թուրքական զինված ուժերն Ադրբեջանում կհաստատեն թերեւս մշտական ներկայություն: Խոսքը հրապարակայնացվող ներկայության մասին է, ոչ պաշտոնապես Թուրքիան միշտ էլ ներգրավված է եղել Ադրբեջանում զինված ուժերի ձեւավորմանն ու բանակաշինությանը, ինչպես նաեւ մասնակցություն ունեցել ղարաբաղյան պատերազմին:

Ուշագրավ է, որ Բաքվի մերձակայքում թուրք-ադրբեջանական համատեղ զորավարժությունների մեկնարկի մասին տեղեկատվությանը զուգահեռ երեկ ադրբեջանական մամուլը հայտնի դարձրեց, որ «երկօրյա պաշտոնական այցով Ադրբեջան է ժամանում Թուրքիայի ԱԳ նախարար Ահմեդ Դավութօղլուն»: Ըստ Ադրբեջանի ԱԳՆ հաղորդագրության՝ Դավութօղլուն «կհանդիպի նախագահ Իլհամ Ալիեւի, վարչապետի, Միլլի մեջլիսի խոսնակի եւ ԱԳ նախարար Էլմար Մամեդյարովի հետ, բանակցությունների ավարտին կկայանա համատեղ մամուլի ասուլիս»:

Կողմերը կքննարկեն «տարածաշրջանային նախագծերում եւ միջազգային կառույցներում համատեղ գործողությունների հետ կապված հարցեր»: Կհանդիպի՞ Դավութօղլուն թուրք-ադրբեջանական զորավարժությունների մասնակիցների հետ՝ այդ մասին պաշտոնական հաղորդագրության մեջ ասված չէ: Այդուհանդերձ, ինչո՞ւ բացառել, որ Թուրքիայի ԱԳ նախարարը կայցելի Գարահեյբաթ ուսումնավարժական կենտրոն եւ «օրհնանքի» իր խոսքը կասի:

*Տես էջ 3*

# Եկող տարի կենսաթոշակները կբարձրանան 20 տոկոսով, աշխատավարձերը՝ 85 տոկոսով

## *Ֆինանսների փոխնախարար Պավել Սաֆարյանը՝ առաջիկա երեք տարիների սոցիալական ծախսերի մասին*

***2014-2016 թվականների միջնաժամկետ ծախսային ծրագրի վերաբերյալ ֆինանսների փոխնախարար Պավել Սաֆարյանի հետ մեր հարցազրույցում անդրադարձել ենք հիմնականում սոցիալական ոլորտում կառավարության կողմից ծախսերի կտրուկ ավելացման եւ մասնավորապես՝ կենսաթոշակների եւ աշխատավարձերի բարձրացման մանրամասներին: Այս առումով, առաջիկա տարիներին նախատեսված քայլերը թերեւս աննախադեպ են վերջին 4-5 տարիների ընթացքում, որոնց սպասում էին հարյուրհազարավոր թոշակառուները եւ պետական համակարգում աշխատողները:***



**- Միջնաժամկետ ծախսային ծրագրով ի՞նչ 2 խոշոր ծախսային հոդվածներ են ավելանալու եկող տարի:**

- 143 մլրդ դրամի եկամուտների ավելացում ենք նախատեսում եկող տարի, որի հիմնական մասն ուղղվելու է նախ՝ թոշակների 20 տոկոս բարձրացմանը: Խոսքը 37,7 մլրդ դրամի մասին է: 61 մլրդ դրամ էլ ուղղվելու է աշխատավարձերի բարձրացմանը: Փաստորեն, այս երկու հոդվածներին միասին գրեթե 99 մլրդ դրամ է հատկացվելու: Երրորդ կարեւոր ուղղությունը՝ կուտակային թոշակներին է հատկացվելու մոտ 20 մլրդ դրամ, քանի որ եկող տարվանից սկսելու է գործել նոր՝ կենսաթոշակների կուտակային համակարգը: Կան նաեւ ուղղություններ, որոնք ամեն տարի անխուսափելիորեն ավելացնում ենք: Խոսքը նախ եւ առաջ պաշտպանության ոլորտի ծախսերին է վերաբերում, որոնք այս տարի նույնպես ավելանալու են:

*Տես էջ 2*

# Զոհրաբ Մնացականյանը՝ Ասոցացման համաձայնագրի հրապարակման մասին

Մի շարք լրատվամիջոցներ, այդ թվում՝ «Ազգը», երեկ զարմանք էին հայտնել, որ ԵՄ-Հայաստան Ասոցացման պայմանագրի տեքստը չի հրապարակվում, մինչդեռ դրա նախաստորագրմանը շատ ժամանակ չի մնացել: Այդ մտահոգությանն արձագանքել է Հայաստանի փոխարտգործնախարար Զոհրաբ Մնացականյանը, Վիլնյուսի գագաթաժողովին ընդառաջ Արեւելյան գործընկերության գերակայություններին վերաբերող գիտաժողովի ժամանակ, նշելով, թե բանակցությունները դեռ չավարտված՝ համաձայնագրի հրապարակումը եվրոպացի գործընկերները չեն հասկանա: Մոտ 1000-էջանոց փաստաթղթի վերաբերյալ բովանդակային բանակցություններն ավարտված չեն: Հետաքրքականն է, որ, ըստ Զ. Մնացականյանի, կես տարի դեռ կպահանջվի, որ փաստաթուղթը ստորագրման վիճակի հասցվի, նրա վավերացումը պետք է տեղի ունենա ոչ միայն մեր խորհրդարանում, այլեւ ԵՄ 28 երկրների խորհրդարաններում: Իսկ մինչեւ փաստաթուղթն ուժի մեջ մտնի, կպահանջվի մոտ երեք տարի:

Ս. Խ.

# Վերահաշվարկը չփոխեց Պռոշյանի ընտրությունների պատկերը, ՀՅԴ-ն հայտարարություն է տարածել

Պռոշյան համայնքի ընտրություններին հաջորդ օրը գյուղապետի թեկնածու, երկու հիմնական մրցակիցներից Վովա Սահակյանը դիմել էր ԿԸՀ՝ ընտրությունների արդյունքների վերահաշվարկի պահանջով: Վերահաշվարկը երեկ տեղի է ունեցել, որը մեծ փոփոխություններ չի արձանագրել: ՀՀԿ-ական թեկնածու, նախնական արդյունքներով Պռոշյան համայնքի ղեկավար ընտրված Արթուր Մուրադյանի 1317 ձայներն ավելացել են 8-ով, իսկ Վ. Սահակյանի 1241-ը՝ 3-ով:

Իսկ ահա ՀՅԴ գերագույն մարմինը երեկ Պռոշյանի ընտրությունների մասին հայտարարություն է տարածել, գնահատելով, որ դրանք անցել են վերջին շրջանում տեղի ունեցած բոլոր մակարդակների ընտրություններին հատուկ տրամաբանությամբ, կրկին գործի են դրվել հանրածանոթ բոլոր մեթոդները՝ վարչական լծակների կիրառում, արտաքին միջամտություն, պարտադրանք, ընտրակաշառք: Արդյունքում, ըստ հայտարարության, հաղթանակն արձանագրվել է սպանված համայնքապետ Հրաչ Մուրադյանի՝ նախորդ ընտրություններում մրցակից հանրապետական թեկնածուի օգտին.«Քաղաքական ցինիզմի այսօրինակ դրսեւորումը խաթարեց ընտրական գործընթացը, խորացրեց համայնքում առկա լարվածությունը:

Հակառակ այս իրողությանը՝ մենք հորդորում ենք Պռոշյանի բոլոր բնակիչներին՝ տուրք չտալ նոր լարվածություն ստեղծելու հնարավոր փորձերին, միաժամանակ վստահեցնում ենք, որ հասարակության համախմբմամբ հետամուտ ենք լինելու Հրաչ Մուրադյանի սպանության լիարժեք բացահայտմանը եւ մեղավորներին պատժելուն»,-ասված է հայտարարության մեջ:

Ս. Խ.

# Արա Աբրահամյանը խոստացել է օգնել Պոդոլսկի վթարից տուժածներին

Ռուսաստանի հայերի միության նախագահ Արա Աբրահամյանը ռուսական «Պլանետա» հեռուստաալիքով Պոդոլսկում տեղի ունեցած ցավալի ավտովթարի քննարկման ժամանակ ցավ է հայտնել կատարվածի վերաբերյալ՝ նշելով, որ տեղի ունեցածի բոլոր մեղավորները պետք է պատժվեն, այդ թվում՝ «Կամազի» հայ վարորդը, բեռնատարի տերը, լիցենզիա տրամադրողները: Արա Աբրահամյանը հայտնել է նաեւ պատրաստակամություն՝ վթարից տուժած անձանց օգնություն տրամադրելու. «Մենք դա անում ենք ոչ թե նրա համար, որ վթարի մեղավորը Հայաստանի քաղաքացի է, այլ քանի որ մենք մշտապես օգնություն տրամադրում ենք: Ես սա ասում եմ որպես Ռուսաստանի քաղաքացի», ասել է նա:

Ս. Խ.

# ՀՀ գլխավոր դատախազի պահանջատիրությանը արձագանքել է նաեւ պաշտոնաթող թուրք դեսպանը

## *Նա ասել է այն, ինչ չէր ասում Թուրքիայի արտգործնախարարության խոսնակը*

Իրավաբանների համահայկական 2-րդ համագումարում ՀՀ գլխավոր դատախազ Աղվան Հովսեփյանը հայտարարել էր, որ Հայաստանի Հանրապետությունը պահանջատեր է Թուրքիայից, հայ-թուրքական սահմանը իրավական հաստատում չունի, եւ Թուրքիան պետք է տարածքային փոխհատուցում տա ցեղասպանության տուժող կողմ Հայաստանին:

Համագումարը հուլիսի 5-6-ին գումարվել էր Երեւանում, նախաձեռնությամբ սփյուռքի նախարարության: Համագումարում գլխավոր դատախազի ելույթին, ինչպես նշվել է նախորդ համարում, ի դեմս խոսնակի, հուլիսի 13-ին արձագանքեց Թուրքիայի արտգործնախարարությունը, այն էլ լրագրողների հետ հանդիպմանը՝ ի պատասխան հարցի: Ըստ երեւույթին, Թուրքիայի արտգործնախարարությունը պատասխանի այդ ձեւն է ընտրել, որ չհայտնվի ՀՀ գլխավոր դատախազի պահանջատիրությունը կարեւորողի դերում:

Սակայն Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացը ինքնին ենթադրում է հանցագործության հետեւանքների վերացումը, իսկ խոսնակը, անկախ նկրտումներից, անմիջականորեն արտահայտում է արտգործնախարարության կարծիքը: Ահա թե haber7.com կայքէջի վկայությամբ, ինչ է ասել խոսնակ Լեւենթ Գյումրուքչուն. «Հուլիսի 5-6-ը Երեւանում գումարված իրավաբանների համահայկական 2-րդ համագումարում, որը բացել է Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանը, Թուրքիա-Հայաստան սահմանի իրավական հաստատում չունենալու եւ կորսված հայկական հողերը Հայաստանին վերադարձնելու անհրաժեշտության մասին ՀՀ գլխավոր դատախազ Հովսեփյանի հայտարարության առթիվ ափսոսանք ենք հայտնում: Գլխավոր դատախազի պաշտոնն զբաղեցնող այս պատասխանատու գործչի հայտարարությունը հարեւան Թուրքիայի տարածքային ամբողջականության եւ Թուրքիա-Հայաստան հարաբերությունների առնչությամբ Հայաստանում գերիշխող խնդրահարույց մտածելակերպի արտահայտությունն է, միաժամանակ հակասում է այն պարտավորությունների ոգուն, որոնք տվյալ երկիրը ստանձնել է՝ անդամակցելով ՄԱԿ-ի եւ ԵԱՀԿ-ի գլխավորությամբ միջազգային կազմակերպություններին: Քաջ պետք է իմանալ, որ որեւէ պետություն չի կարող Թուրքիայից տարածքներ պահանջելու հանդգնությունը դրսեւորել»:

Թուրքիայի արտգործնախարարության խոսնակի արձագանքից առաջ՝ հուլիսի 9-ին Նյու Յորքի «Թուրքական» կայքէջում գլխավոր դատախազի հայտարարությանը անդրադարձել էր նախկին դեսպան Օմեր Էնգին Լյութեմը: Նա նշել է, որ իրավաբանների համահայկական 2-րդ համագումարի բացման խոսքում ՀՀ նախագահը գոհունակությամբ է արտահայտվել նրանց մասին, ովքեր Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի վրա են գրավում այլ երկրների ուշադրությունը:

*Տես էջ 3*

# Ընթացիկ

## Մեկ տարվա ընթացքում շուրջ 450-ով ավելացել է թմրամոլների թիվը

Նախորդ երկու տարիների համեմատությամբ թմրամոլությամբ տառապող անձանց թվի աճ է նկատվում: Պաշտոնապես գրանցված թմրամոլների թիվը 4332 է, ոչ պաշտոնապես մեր երկրում թմրանյութի կախվածությամբ տառապում է 12.700 մարդ: Նրանց միջին տարիքը չի գերազանցում 45-ը, հիմնական խումբը 30-40 տարեկան անձինք են: Տվյալները հանրապետության գլխավոր նարկոլոգ, նարկոլոգիական կլինիկայի ղեկավար **Պետրոս Սեմերջյանինն** են: Նրա տեղեկացմամբ՝ հիմնականում թմրամոլությամբ տառապում են Երեւանում եւ Արմավիրում:



Սեմերջյանի հավաստիացմամբ՝ բուժման կուրս անցնելուց հետո հիվանդները համարվում են լիովին առողջ եւ կարող են վերադառնալ բնականոն կյանքի: Այս հարցում նարկոլոգը ոչ այնքան կարեւորում է հոգեբանի եւ հոգեբանական միջամտությունը, որքան բժշկական միջամտությունը, որովհետեւ թմրամոլությունը որեւէ կապ չունի հոգեբանության եւ հոգեբանական խնդիրներ հետ:

«Թմրամոլությունը ֆիզիկական եւ հոգեբանական կախվածություն է: Դա նշանակում է, որ անձը չի կարողանում առանց թմրանյութի ապրել: Դա նման է մի իրավիճակի, երբ մարդուն անհրաժեշտ է մեկ բաժակ ջուր ծարավը հագեցնելու համար, բայց նրան չեն տալիս: Եվ ջուր խմելու ցանկությունն ավելի է մեծանում»:

Թմրանյութերի օգտագործումը բացասական ազդեցություն է թողնում մարդու բոլոր օրգանների վրա, սակայն առավելապես ազդում է լյարդի եւ գլխուղեղի վրա:

Թմրամոլության բուժումը մեր երկրում անցկացվում է անվճար՝ պետպատվերի շրջանակներում, իսկ ոչ ՀՀ քաղաքացիների համար գանձվում է 140.000 դրամ: Նարկոլոգիական կենտրոնում բուժվելու համար որպես կարեւոր նախապայման անհրաժեշտ է հիվանդի համաձայնությունը: «Առանց նրա համաձայնության մենք բուժում չենք իրականացնում», ասում է նարկոլոգը՝ հավելելով, որ թմրամոլները նման են այն հերոսներին, որոնք արտաքնապես երիտասարդ են, սակայն նրանց ներսում ապրում է հիվանդ մի ծերունի, ու հաճախ իրենք էլ չեն հասկանում, թե ինչպես ընկան թակարդը: Հետեւաբար, դեռեւս մանուկ հասակից անհրաժեշտ է անդադար խոսել թմրանյութերի վնասների մասին, որպեսզի թմրամոլությամբ տառապողների տարիքը չերիտասարդանա:

Նախորդ տարի Հայաստանում հաշվառված էր 3893 թմրամոլ, իսկ 2011-ին՝ 2751: Հ. Հ.

## Վարկային արտոնություններ կարկուտից տուժած գյուղացիներին

**Ինչպես արդեն տեղեկացրել ենք, մայիսի 12-ին կարկտահարությունից տուժեցին գյուղացիները, եւ «Կամուրջ» ՈւՎԿ ՓԲԸ-ն վերանայում է կարկտահարությունից տուժած բոլոր հաճախորդների վարկերի պայմանները:**

**Ինչպես լրագրողներին տեղեկացրեց «Կամուրջ» ՈւՎԿ ընկերության նախագահ Արա Աղայանը, կարկուտից հետո «Կամուրջ» ՈւՎԿ ընկերությունում ձեւավորվեց աշխատանքային խումբ, որ մեկնեց մարզեր, հանդիպեց տուժած գյուղացիների հետ: Իսկ վերլուծության արդյունքում պարզ դարձավ, որ Արմավիրի մարզի 77 վարկառուներից 26-ն ստացել են վնասներ, տուժած գյուղացիների թիվը գերազանցում է 1000-ը:**

**Ընկերությունը, լսելով գյուղացիների առաջարկները, բողոքներն ու դիտողությունները, հանգել է հետեւյալ որոշման. վարկերի մարման ժամկետները երկարաձգվել են 1-2 տարով՝ կախված վարկառուների կողմից մշակվող մշակաբույսերի եւ ծառերի վերականգնման ժամկետներից եւ այլընտրանքային եկամտի աղբյուրների առկայությունից:**

**Վարկերի տոկոսադրույքները էապես նվազեցվել են՝ հաշվի առնելով տվյալ գյուղական համայնքում կարկուտից վարկառուների տուժելու աստիճանը եւ հետեւանքները:**

**Ի դեպ, վարկերի գործողության ամբողջ ժամանակահատվածում չեն գանձվելու միջնորդավճարներ, ինչպես նաեւ վարկերի սպասարկման վճարներ:**

**Որոշ դեպքերում մի քանի ամսով հետաձգվել են տոկոսների վճարումները՝ հաշվի առնելով վարկառուների ծանր սոցիալական պայմանները եւ տվյալ պահին մարումներ կատարելու անհնարինությունը:**

**Ընկերությունը պատրաստակամություն է հայտնել նաեւ մյուս տարվա գյուղատնտեսական աշխատանքների մեկնարկի ժամանակ կրկին լրացուցիչ վարկավորել այն վարկառուներին, որոնք կկատարեն վերակառուցված վարկային պարտավորությունները:**

**Ի դեպ, «Կամուրջ» ՈւՎԿ ընկերությունը միացել է նաեւ «Զրից դեպի շուկա» ծրագրին:**

ՄԱՆԱՆԱ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ

## Եվրոտեսիլյան անտեսումներ

**Շվեդիայում վերջերս ավարտված «Եվրոտեսիլ» 13-ը թերեւս ամենասկանդալայինն էր երգի այս հեղինակավոր մրցույթի ավել քան հիսունամյա պատմության մեջ: Այս մրցահանդեսը, ցավոք, տարեցտարի կորցնում է իր երբեմնի փառքն ու հեղինակությունը: Որքան էլ խնամքով քողարկվի, այդուհանդերձ նկատելի են հեռուստամրցույթի կազմակերպիչների խոհանոցային գործարքներից բխող նախապատվությունները այս կամ այն երկրի օգտին: Քննադատության չի դիմանում նամանավանդ ձայների հաշվարկման մեխանիզմը: Ապացույցը՝ Բաքվից հնչած սենսացիոն հայտարարությունն էր Ռուսաստանի օգտին տված ձայների կորստյան մասին: Ակներեւ է որ «Եվրոտեսիլի» կազմակերպման եւ անցկացման սկզբունքները կարիք ունեն խիստ վերանայման:**

**Սակայն վերն ասվածը ամենեւին չի արդարացնում մեր խմբի թույլ ելույթը «Եվրոտեսիլում»: Ինչպիսի ինտրիգներ էլ լինեն, իրոք բարձր մակարդակի երգ-ներկայացումն անպայման իրեն նկատել կտա: Գրված էր արհական, համամարդկային ցավ, պրոբլեմ արծարծող մի երգ: Ընտրված էր լավ վոկալիստ ի դեմս երգիչ Գոռ Սուջյանի: Սակայն ռոք-բենդի ձեւաչափով հանդես գալը եղավ տանուլային տարբերակ: Կապը հանդիսատեսի հետ տեղի չունեցավ: Հանդիսատեսին պետք էր նվաճել Lonely Planet երգի բեմականացմամբ, ուր եգիչը սոսկ կատարող չէ, այլ՝ դերասան, արտիստ:**

**Արդեն կրքերը հանդարտվել են եւ ոչ մի փորձ չի արվում քննարկելու «Եվրոտեսիլում» հայկական պատվիրակության անհաջող ելույթների պատճառը: Ինչո՞ւ է տիրում ստեղծագործական չբերության մթնոլորտ: Ամեն տարի գրեթե ոչինչ չանել եւ հույսը դնել սփյուռքահայերի քվեարկությանը՝ աններելի է: Պետք է ի զորու լինել նվաճելու եվրոպական լսարանը, եւ դա միանգամայն իրականանալի խնդիր է: Պարզապես դրան պետք է տրվի լուրջ պետական մոտեցում: Նախապատրաստվելը պետք է լինի հանրապետության լավագույն բեմադրիչների պատվի գործը:**

**Ադրբեջանում տարիներ ի վեր այս մրցելույթին տրվում է Ղարաբաղյան խնդրից ոչ պակաս լրջություն, այն գտնվում է անմիջապես ալիեւյան կլանի վերահսկողության ներքո: Եվ ներդրված ջանքեն արդյունք են տալիս:**

**Հայերս կարող ենք թույլ գտնվել սպորտային միջազգային մրցումներում, սակայն թույլ լինել մշակութային բնույթի մրցելույթներում՝ աններելի է: Սա հարիր չէ բարձր մշակույթ ունեցող ազգին:**

ՍԱՌԱ ԳԱՍՊԱՐՅԱՆ, Նյու Յորք

## Ուղղում

Մեր նախորդ՝ 16 հուլիսի համարում «Հայաստանյայց Ավետարանական եկեղեցին եւ Հայ ավետարանչական ընկերակցության Հայաստանի մասնաճյուղը տեղեկացնում են» վերնագրով հաղորդման մեջ սխալմամբ տեղ է գտել լուսանկար, որը ոչ մի առնչություն չունի այդ նյութի հետ: Ներողամտություն ենք հայցում:

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ

## Եկող տարի կենսաթոշակները կբարձրանան 20 տոկոսով, աշխատավարձերը՝ 85 տոկոսով

*1-ին էջից*

**- Ավելի կոնկրետ՝ թոշակների մասին: Ինչքա՞ն են դրանք ավելանալու եւ որքա՞ն է կազմելու միջին կենսաթոշակը Հայաստանում:**

- 2014-ին 448 հազար կենսաթոշակառուների կենսաթոշակը ավելանալու է մոտ 6 հազար դրամով՝ ներկայիս միջին ամսական 31 հազար դրամից հասնելով 37 հազար դրամի: 2015-ին կենսաթոշակները եւս 15 տոկոսով կավելանան, եւ միջին կենսաթոշակը կկազմի 43 հազար դրամ: Ուզում եմ ընդգծել, որ փաստորեն 20 տոկոսով թոշակների ավելացումը եկող տարի պետական բյուջեի համար գրեթե 100 մլն դոլար է արժենում:

**- Քաղծառայողների աշխատավարձերը վաղուց չեն բարձրացվել, եւ նրանց բոլորին հետաքրքրում է, թե եկող տարի որքա՞ն են բարձրանալու իրենց աշխատավարձերը:**

- Քաղծառայողների ներկայիս միջին հաշվարկային աշխատավարձը կազմում է 171 հազար դրամ: Այստեղ 2014-ին նախատեսվում է աշխատավարձերի միջինը 85 տոկոսով բարձրացում, քաղծառայողների միջին աշխատավարձը կկազմի 317 հազար դրամ՝ ներառյալ եկամտահարկը, օրենքով նախատեսված երեք տարին մեկ անգամ բարձրացումը: 2015-ին նախատեսվում է եւս 15 տոկոսով աճ եւ 366 հազար դրամ միջին աշխատավարձ եւ 2016-ին էլ մոտ 13 տոկոսով բարձրացում, միջին աշխատավարձը կկազմի 413 հազար դրամ: Սակայն կցանկանայի ընդգծել, որ այս բարձրացումը բոլորին հավասարաչափ չի լինելու, քանի որ եկող տարվանից նախատեսվում է պետական համակարգի աշխատավարձերի նոր սանդղակ, որտեղ կիրառվելու են գործակիցներ նվազագույն աշխատավարձի նկատմամբ: Այսինքն, տարբեր չափերով են այդ գործակիցները կիրառվելու, տարբեր պաշտոնների նկատմամբ: Տեղեկացնեմ, որ նվազագույն աշխատավարձը եկող տարվանից կազմելու է 50 հազար դրամ:

**- Ուսուցիչների աշխատավարձերը որքա՞ն են ավելանալու:**

- Ուսուցիչների միջին աշխատավարձը 2014-ին ավելանալու է 17,7 տոկոսով եւ կազմելու 160 հազար դրամ՝ ներկայիս 140 հազար դրամի փոխարեն: 2015-ին նրանց միջին աշխատավարձը կավելանա եւս 10 տոկոսով, կազմելով 181 հազար դրամ, 2016-ին՝ 13,6 տոկոսով, կազմելով 206 հազար դրամ՝ դարձյալ ներառելով հարկերը: Բուհերի դասախոսների միջին աշխատավարձը պետության կողմից ավելանալու է 34 տոկոսով եւ կազմելու մոտ 72 հազար դրամ, ներկայիս 53 հազար դրամի փոխարեն:

**- Առողջապահության եւ մշակույթի ոլորտում ի՞նչ փոփոխություններ են սպասվում:**

- Առողջապահության ոլորտին լրացուցիչ ծախսեր են ավելանալու, ինչի արդյունքում ավելանալու է հիվանդանոցային բուժման մեկ դեպքի գինը: Հատկապես ցանկանում եմ նշել, որ նախատեսվում է ավելացնել ստացիոնար բուժհաստատություններում հիվանդանոցային բուժօգնության դեպքերի հաշվարկային թիվը:

Մշակույթի ոլորտի աշխատողների աշխատավարձերի նկատելի ավելացում է նախատեսվում: Գրադարանների աշխատողների միջին աշխատավարձը 71 հազար դրամից 2014-ին նախատեսվում է հասցնել 106 հազար դրամի, 2015-ին՝ 116 հազար դրամի, 2016-ին՝ 132 հազար դրամի, թանգարանների աշխատողներինը՝ 72 հազար դրամից 2014-ին 94 հազար դրամի, 2015-ին՝ 103 հազար դրամի, 2016-ին՝ 117 հազար դրամի, մշակույթի տների աշխատողներինը՝ 67 հազար դրամից 2014-ին կհասցվի 101 հազար դրամի, 2015-ին՝ 111 հազար դրամի, 2016-ին՝ 126 հազար դրամի:

**- Նախագահի նախընտրական խոստումներից էր 3-րդ եւ 4-րդ երեխայի ծննդյան միանվագ գումարների կտրուկ ավելացումը: Դա նախատեսվո՞ւմ է իրականացնել 2014-ին:**

- Այո, 2014-ից 3-րդ եւ 4-րդ երեխայի ծննդյան դեպքում պետության կողմից տրամադրվելու է 1 մլն դրամ նպաստ ներկայումս տրվող 430 հազար դրամի փոխարեն, իսկ 5-րդ եւ ավելի երեխայի ծննդյան դեպքում այդ նպաստը կազմելու 1,5 մլն դրամ: Սա, կարծում եմ, պետության կողմից տրվող գումարի զգալի ավելացում է ներկայիս տրամադրվող նպաստի չափի համեմատ եւ այս նպատակով պետական բյուջեից նախատեսվում է շուրջ 4 մլրդ դրամի լրացուցիչ ծախսեր, եթե հաշվի ենք առնում այսօրվա ցուցանիշները:

**- Վերջերս ազատամարտիկներն էին բողոքում իրենց սոցիալական վիճակից: Առաջարկներ ունե՞ք նրանց այս առումով:**

- Նրանց օժանդակության չափերը դեռեւս քննարկման փուլում են: Դրանք երբ ձեւավորված լինեն, բյուջեի մեջ տեղ կգտնեն:

**- Իսկ ներկայիս եւ սպասվող գնաճը չի՞ չեզոքացնի թոշակների եւ աշխատավարձերի բարձրացումը՝ ասենք, եկող տարի:**

- Ակնհայտ է, որ թոշակների եւ աշխատավարձերի բարձրացման տեմպերը շատ ավելին են, քան գնաճի տեմպը:

**- Տնտեսական աճի ի՞նչ ցուցանիշներ եք կանխատեսում ծրագրով առաջիկա երեք տարիներին:**

- 2014-ին՝ 6,25 տոկոս, 2015-ին՝ 6,33 տոկոս, 2016-ին՝ 6,4 տոկոս:

**- Տնտեսական աճի եւ լրացուցիչ եկամուտների հավաքման ցուցանիշները ռիսկային չե՞ն:**

- Տնտեսական աճն ինքնին ռիսկեր է պարունակում, բայց այլընտրանք չունենք դրան եւ այդ աճն ապահովելով, պետք է կարողանանք եկամուտները հավաքել:

Հարցազրույցը
ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻ

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԻԲ տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
e-mail: azg@azg.am, azg2@arminco.com
**www.azg.am**
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ հեռ. 060 271117
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ հեռ. 060 271113
Հաշուապահութիւն (գովազդ) հեռ. 582960, 060 271112
Լրագրողների սենեակ հեռ. 060 271118
Համակարգչ. ծառայութիւն հեռ. 060 271115
*Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն*
հեռ 060 271114, 010 529353
Համակարգչային շարուածքը՝ «Ազգ» թերթի

# Հարությունյանը եւ ՀՀ քաղաքացին

Բազմազգ Ռուսաստանում վաղուց արդեն ցանկանում են ընդունել օրենք, որով կարգելվի լրատվամիջոցներին ինչ-որ պատահարի ժամանակ կամ հանցագործության պարագայում նշել հանցագործի ազգությունը կամ քաղաքացիությունը, քանի որ «դա կարող է հանգեցնել էթնիկական անհանդուրժողականության ու պատերազմի բազմազգ Ռուսաստանում»:

Օրենքի տրամաբանությունը հասկանալի է, հասկանալի չէ, թե ինչո՞ւ այսօր, եթե անգամ այդ օրինագիծը դեռեւս ընդունված չէ, բայց ԶԼՄ-ները պատրաստ են դրան ու գիտակցում են դրա կարեւորությունը, ռուսական լրատվամիջոցները փաստորեն հրահրում են միջէթնիկական բախումներ:

Ինչպես գիտենք, մի քանի օր առաջ մերձմոսկովյան Պոդոլսկ քաղաքում «ԿԱՄԱԶ»-ի անսարքությունը եւ հետեւաբար վարորդի անփութությունը դարձել են 18 մարդու մահվան եւ 60 հոգու ծանր մարմնական վնասվածքների պատճառ: Այս կապակցությամբ իր ռուս գործընկերոջը ցավակցական հեռագիր է հղել նաեւ ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը: Հեռագրում ոչ մի խոսք չկա բեռնատարի վարորդի մասին, մինչդեռ ռուսական լրատվամիջոցները, ինչպես նաեւ հայկականները եւ առանձին սոցիալական ցանցերում առանձին մեկնաբան-վերլուծաբաններ, խոսում են ոչ այնքան դժբախտ պատահարից, որքան բեռնատարի վարորդի ազգությունից ու քաղաքացիությունից:

«ԿԱՄԱԶ»-ը վարել է Հրաչ Հարությունյանը, նա ՀՀ քաղաքացի է: Այս հանգամանքը ստիպել է մոսկովյան քաղաքային իշխանություններին էլ ավելի խստացնել ներգաղթյալների վերաբերյալ ունեցած օրենսդրությունն ու առհասարակ ներգաղթյալների կեցությունն ու հատկապես աշխատանքը Մոսկվայում դարձնել խիստ անհարմար: Բայց, ի՞նչ կապ ունի այստեղ բեռնատարի վարորդի ազգությունը, ՀՀ քաղաքացիները «ԿԱՄԱԶ»-ը ավելի վա՞տ են վարում, քան ՌԴ քաղաքացինե՞րը, հնարավոր չէ՞ր արդյոք, որ հիշյալ աղետաբեր բեռնատարի ղեկին նստած լիներ հենց ՌԴ քաղաքացի, եւ ազգությամբ ռուս: Հետեւաբար՝ ի՞նչ կարիք կա անընդհատ շեշտելու վարորդի ազգությունն ու քաղաքացիությունը. հայ լինելն ու ՀՀ քաղաքացի լինելը արդեն հանցանք գործելու նախանշաննե՞ր են համարվում Մոսկվայում:

Ի դեպ, Մոսկվայի գործող քաղաքապետ Սերգեյ Սոբյանինը ազգությամբ յակուտ է, ճիշտ է, նա ՌԴ քաղաքացի է, ինչպես եւ բոլոր յակուտները, բայց ի՞նչ կլիներ, եթե որեւէ ազգությամբ յակուտ նման ողբերգության պատճառ դառնար, նրանց կեցությունը Մոսկվայում պետք է անհարմար դարձնեի՞ն:



Բացի սրանից՝ որտե՞ղ է, թեկուզ «անօրինական», ինչպես ռուսական աղբյուրներ են նշում, աշխատել Հրաչ Հարությունյանը, հետեւաբար ո՞ւմ է պատկանել հիշյալ անսարք «ԿԱՄԱԶ»-ը: Հասկանալի է, որ ինչ-որ ընկերության, բայց ո՞վ է այդ ընկերությանը Մոսկվայում աշխատելու իրավունք տվել, անսարք բեռնատարով, մի՞թե ոչ ինքը՝ Մոսկվայի քաղաքապետարանը եւ անձամբ՝ Սերգեյ Սոբյանինը: Հետեւաբար, եթե «հայ-վարորդ», ապա «յակուտ-քաղաքապետ», թույլ տվեք...

Ոչ ոք չի վիճարկում, որ վարորդ Հարությունյանի անփութությունը դարձել է անմեղ մարդկանց մահվան ու վնասվածքներ ստանալու պատճառ: Հետեւաբար, եթե դատարանը Հարությունյանին մեղավոր ճանաչի (իսկ ՀՀ քաղաքացու դեմ քրեական գործ է հարուցվել, եւ նա կալանավորվել է հենց հիվանդանոցից, որտեղ հայտնվել էր վթարից հետո), ապա Հարությունյանը պետք է կրի իր պատիժը: Բայց ո՞վ է թույլ տվել նվաստացնել ՀՀ քաղաքացուն. այո, նա լավ չի տիրապետում ռուսերենին, չնայած ապրում ու աշխատում է Մոսկվայում, բայց դա քաղաքացուն նվաստացնելու պատճառ չի կարող լինել: Այո, նա Մոսկվայում ապրել ու աշխատել է «անօրինական», բայց դա եւս քաղաքացուն նվաստացնելու առիթ չէ: Այո, նա մեղադրվում է հանցագործության մեջ, բայց անգամ հանցագործը քաղաքացի է, իսկ քաղաքացին՝ որ երկրի էլ լինի, չպետք է նվաստացվի: Մոսկովյան դատարան ՀՀ քաղաքացի Հարությունյանին բերել են կանացի խալաթով, Մոսկվայում ՀՀ դեսպանատունը, որը, ըստ տեղեկության, «մշտական կապի մեջ է Հարությունյանի փաստաբանի հետ», նշել է, որ «Հարությունյանը հագուստի կարիք չունի», այդ պարագայում ինչո՞ւ նա դատարան սեփական հագուստով չի ներկայացել, գուցե չե՞ն թողել՝ նվաստացնելու ցանկությամբ, եթե այո, ապա ո՞վ...

Հրաչ Հարությունյանը ղարաբաղյան պատերազմի մասնակից է, նրա որդին մեկ տարի առաջ մահացել է ՀՀ բանակում, ռուսական «ՆՏՎ» հեռուստաընկերությանը տված հարցազրույցում Հարությունյանի եղբայրն ասել է, որ Հրաչ Հարությունյանը Մոսկվա «մի քանի կոպեկ փող աշխատելու» էր գնացել, որպեսզի «կարգի բերի որդու գերեզմանոցը»...

Ի դեպ, Հարությունյանի գործով դատարանում մեղադրող կողմը ներկայացնող դատախազներից մեկը եւս ազգությամբ հայ է, չնայած ՀՀ քաղաքացի չէ:

ՀՈՎԻԿ ԱՖՅԱՆ

**Հ. Գ.-Հարությունյանին իհարկե կպատժեն ազատազրկման: Մոսկվայում իհարկե կխստացնեն միգրացիոն օրենսդրությունը: Միեւնույն ժամանակ Մոսկվայի քաղաքապետարանը դեռ կշարունակի գործունեության իրավունք տալ բազմաթիվ ընկերությունների, որոնք ունեն անսարք մեքենաներ եւ սարքավորումներ, օրինակ, շինարարական:**

ԹՈՒՐՔԱԿԱՆ ԱՐՁԱԳԱՆՔ

# ՀՀ գլխավոր դատախազի պահանջատիրությանը արձագանքել է նաեւ պաշտոնաթող թուրք դեսպանը

*1-ին էջից*

**Ապա Լյութեմն ավելացրել է. «Թեեւ Հայոց ցեղասպանության հայկական թեզի ճանաչումը այլ երկրներում եւ միջազգային կազմակերպություններում եղել է Հայաստանի բոլոր նախագահների առաջադրանքը, սակայն վերջիններս ցեղասպանությունը ճանաչելու եւ դատապարտելու բացահայտ պահանջ չեն ներկայացրել Թուրքիային: Հայ-թուրքական արձանագրությունների ձախողումից հետո նախագահ Սարգսյանը սկսեց խստացնել Թուրքիային հասցեագրված քննադատությունների ոճը, իսկ վերջին 2 տարիներին ձեռնամուխ եղավ ցեղասպանության ճանաչման եւ դատապարտման պահանջ ներկայացնելուն Թուրքիային: Սակայն նա դրանով չի բավարարվում, այլ համառորեն «ցեղասպանության հետեւանքների վերացման» հարցն է բարձրացնում: Դա ենթադրում է փոխհատուցում վճարել տեղահանության ժառանգներին, վերադարձնել առգրավված հայկական կալվածքները՝ եկեղեցիները ներառյալ, ինչպես նաեւ Թուրքիայից տարածք զիջել Հայաստանին: Դրանով հանդերձ նախագահ Սարգսյանն ու այլ գործիչներ հողային պահանջի մասին բացահայտ չէին արտահայտվում:**

**Այդ «բացը», եթե տեղին է ասել, լրացրել է ՀՀ գլխավոր դատախազ Աղվան Հովսեփյանը: Նա ասել է, որ Թուրքիա-Հայաստան սահմանը իրավաբանորեն հաստատված չէ, կրկնել է սփյուռքի տեսակետները, թե Լոզանի պայմանագիրը չի մերժել Սեւրը, ուժի մեջ է նախագահ Վիլսոնի իրավարար որոշումը, Լոզանը Թուրքիա-Հայաստան սահմանի մասին որոշում չի ընդունել, ինչ վերաբերում է Մոսկվայի եւ Կարսի պայմանագրերին, որոնցով գծվել է սահմանը, ապա կարելի է առարկել դրանց:**

**Գլխավոր դատախազը հիշեցրել է, որ Ադրբեջանը, բացի Ղարաբաղից, ադրբեջանական տարածք է համարում նաեւ Երեւանը, ուստի դրան հակադրվելու համար պետք է առաջ քաշել Նախիջեւանի հայկական պատկանելության խնդիրը: Այսպիսով, գլխավոր դատախազը դարձել է Թուրքիային բացահայտ հողային պահանջ ներկայացնող առաջին պաշտոնական գործիչը Հայաստանում: Թեեւ Հովսեփյանի խոսքերը հնարավոր է վերագրել անձնական կարծիքին, սակայն դժվար է ենթադրել, որ նա այսպիսի կարեւոր հարցում, առանց նախագահ Սարգսյանի հավանության, նման հայտարարություն անի:**

**Ինչ վերաբերում է այլ երկրներում հայկական պահանջների պաշտպանության հավանականությանը, ապա հողային պահանջները, որոնք հակասում են ՄԱԿ-ի սկզբունքներին, նույնիսկ պատերազմի պատճառ են համարվում, որպես կանոն հավանության չեն արժանանում: Հզոր Թուրքիայի իմիջը մեզ թույլ չի տալիս, որ կարեւորենք պահանջները: Այլապես դրանք կարող են դրական արձագանք գտնել: Չի բացառվում, որ Եվրամիության հետ Ասոցացման պայմանագիր ստորագրող Հայաստանը 2014-ին միության անդամ երկրներում եւ կառույցներում ավելի ուժգին հնչեցնի հայկական այդ պահանջները: Համենայն դեպս, արձանագրությունների ձախողմամբ արդեն լարված Թուրքիա-Հայաստան հարաբերությունները հողային պահանջներով ներքաշվում են արկածախնդրության մեջ»:**

**Պաշտոնաթող դեսպան Լյութեմը հզոր Թուրքիայի իմիջի մասին արտահայտվելիս ակամա պատասխանում է, թե ինչու է խուսափում թուրքական կողմը ՀՀ գլխավոր դատախազի պահանջներին պաշտոնապես արձագանքելուց: Գալով Թուրքիայի արտգործնախարարի խոսնակի եւ Լյութեմի արձագանքներին, ապա դրանք առանձին խնդիր են, մասնավոր մոտեցում են պահանջում:**

ՀԱԿՈԲ ՉԱՔՐՅԱՆ

# Թուրքիան «մտա՞վ» Հարավային Կովկաս

*1-ին էջից*

**Ամեն դեպքում հենց համատեղ զորավարժությունների օրն Ադրբեջանում գտնվելու Դավութօղլուի որոշումը չի կարող «պարզ զուգադիպություն» լինել: Թուրքիան Ադրբեջանում իր քաղաքական, տնտեսական եւ մշակութային ներկայությանն ավելացնում է նաեւ ռազմական բաղադրիչը: Թուրքիան կարծես «անաղմուկ մտնում է» Հարավային Կովկաս: Ու եթե ՆԱՏՕ-ի անդամ լինելու հանգամանքով նրա այդ քայլերի հանդեպ արեւմտյան դաշինքի երկրների լռությունը դեռ կարելի է «հասկանալ», ապա տարածաշրջանի հանդեպ ավանդաբար «խանդոտ» վերաբերմունք ունեցող այլ երկրների կեցվածքն առնվազն տարօրինակ է:**

**Հատկապես եթե հաշվի առնվի, որ շատ հնարավոր է՝ Ադրբեջանում Թուրքիայի զինված ուժերի ներկայությունն ընդամենը «հետախուզական մարտ է» աշխարհաքաղաքական այն վերադասավորումներից առաջ, որոնց մասին վերջին տարիներին համառորեն խոսում են արեւմտյան փորձագիտական շրջանակները:**

# Հրաչյա Հարությունյանի փաստաբան Մալցեւը՝ հայ վարորդի գործի մասին

Ռուսաստանում խոշոր ավտովթարի պատճառ վարորդ Հրաչյա Հարությունյանի դատապաշտպան Ալեքսանդր Մալցեւն «Արմենպրեսին» տեղեկացրել է, որ Հ. Հարությունյանն ապահովված է երկու փորձառու փաստաբանով, որոնք պաշտպանությունը կառուցելու են այն բանի վրա, որ պատասխանատվության ենթարկվեն շահագործման համար ոչ պիտանի բեռնատարով Հ. Հարությունյանին բեռ տեղափոխել հանձնարարած ընկերության պատասխանատուները: Որոնվում է կազմակերպության տերը, որի ներքո աշխատող մեքենան փորձաքննություն անցած չի եղել: Լրագրողը հարցրել է երկրորդ պաշտպան Զուբաեւի այն խոսքի մասին, ըստ որի նոր մեղադրյալներ կարող են ի հայտ գալ, Մալցեւն էլ հաստատել է, որ երկրորդ պաշտպանը նկատի է ունեցել կազմակերպության ղեկավարությանը: Հարությունյանին կանացի խալաթով նվաստացուցիչ կերպով եւ կոմայից անմիջապես հետո դատարան ներկայացնելու վերաբերյալ Մալցեւն ասել է. «Կարող եմ ասել, որ իրավապահ մարմինների կողմից խախտում է թույլ տրվել. նրան բերել են գործնականում կիսամերկ՝ կարծես ցանկանալով նվաստացնել մարդուն, ինչի կապակցությամբ ես եւ իմ կոլեգա փաստաբանը համապատասխան արձագանք ենք տվել եւ մեր դժգոհությունը հայտնել: Անընդունելի է, որ նրան հիվանդանոցից բերել են այդ վիճակում՝ ոչ մի հագուստ չտալով: Բացի դրանից, ԶԼՄ-ները նրան ցույց տվեցին այդ տեսքով՝ տառացիորեն նվաստացնելով մարդուն: Բանն այն է, որ նա գտնվել է Մոսկվայի 20-րդ քաղաքային հիվանդանոցում, որտեղից էլ պահակախմբի հսկողությամբ բերվել է դատարան, ուստի մենք ոչ մի կերպ չէինք կարող ազդել տեղափոխման ընթացքի վրա: Մենք նրան տեսանք դատարանի դահլիճում, երբ արդեն սկսել էր դատական գործընթացը եւ քննիչը միջնորդություն էր ներկայացնում կալանքը՝ որպես խափանման միջոց, կիրառելու վերաբերյալ»: Մալցեւը նաեւ ավելացրել է, որ Հայաստանի դեսպանատան մամուլի քարտուղարությունից կապվել են իրենց հետ եւ օգնություն առաջարկել, եւ Ռուսաստանում հայկական համայնքի ներկայացուցչի հետ են քննարկել գործի մանրամասները:

# Ի գիտություն մրցութային շեմը չհաղթահարած դիմորդների

**ՀՀ պետական եւ ոչ պետական բուհերի առկա ուսուցման 2013 թվականի ընդունելության անվճար եւ վճարովի ուսուցման մրցույթների արդյունքները հրապարակվել են հուլիսի 15-ին: Ընդունելության քննություններից դրական միավոր (միավորներ) ստացած, սակայն մրցույթից դուրս մնացած դիմորդները հուլիսի 15-20-ը կարող են մասնակցել թափուր տեղերի մրցույթին՝ թափուր տեղեր ունեցող բուհում լրացնելով նոր դիմում-հայտ: Հանրապետական ընդունող հանձնաժողովը բուհերում թափուր տեղերի մրցույթի արդյունքները կհասասի հուլիսի 25-ին:**

## Տարաբնույթ

# «Հայկական հարցի միջազգայնացման 1912-1923 թթ. փուլը» հանրապետական գիտաժողովը

Հայոց ցեղասպանության 100-ամյա տարելիցին ընդառաջ հանրապետությունում կազմակերպվում են տարատեսակ միջոցառումներ: Այդ շրջանակներում սույն թվականի հուլիսի 12-ին ՀՀ Գիտությունների ակադեմիայի Պատմության ինստիտուտի նիստերի դահլիճում տեղի ունեցավ հանրապետական գիտական կոնֆերանս, որը նվիրված էր 1912-14 թթ. ընթացքում Հայկական հարցի վերաբացման 100-ամյակին:

Բացման խոսքով հանդես եկավ ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի տնօրեն, ԳԱԱ թղթակից անդամ, պրոֆեսոր **Աշոտ Մելքոնյանը**: Ողջունելով ու ստեղծագործական բեղուն աշխատանք մաղթելով բոլոր մասնակիցներին, Մելքոնյանը ներկայացրեց կոնֆերանսի կազմակերպման շարժառիթներն ու նշանակությունը: Նա ընդգծեց շատ կարեւոր մի հանգամանք. օրերս տեղի ունեցած իրավաբանների համահայկական գիտաժողովում, որտեղ ելույթներ ունեցան ՀՀ իրավական ոլորտի բոլոր առաջին դեմքերը, հստակ ընդգծվեց, որ այսուհետեւ Հայոց ցեղասպանության խնդիրը ճանաչումից տեղափոխվում է պահանջատիրության, իսկ պահանջատիրությունը՝ զգացական ոլորտից՝ իրավական դաշտ: Անուրանալի է, որ այդ գործում մեծ է եղել հատկապես պատմաբանների ներդրումը: Ներկա գիտաժողովը այդ կարեւոր գործընթացի բաղկացուցիչ մասն է եւ առաքելություն ունի փաստական ու վերլուծական առումով լրացնելու նախկինում եղած գործընթացները:

Ա. Մելքոնյանը գիտաժողովի առաջին նիստը վարելու համար հրավիրեց **Ս. Ստեփանյանին**, որը ելույթի համար ձայնը տվեց նոր պատմության բաժնի վարիչ **Ռուբեն Սահակյանին**: «Հայկական հարցը Յակով Զավրիեւի անտիպ գործերում» վերնագրված ելույթն ավելի շատ կրում էր հաղորդագրության բնույթ եւ ներկայացնում Զավրիեւի նորահայտ հետաքրքրական աշխատանքն ու նրանում առկա ուսանելի եւ կիրառական կողմերը:

Երկրորդ զեկուցողը դոցենտ, Պատմության ինստիտուտի առաջատար գիտաշխատող, ՌԱԿ հանրապետական վարչության ատենապետ **Սուրեն Սարգսյանն** էր, ում աշխատանքը վերնագրված էր «Հայ սահմանադրական ռամկավար կուսակցությունը եւ Հայկական հարցը»: Ավելի մանրամասն ներկայացնենք այս զեկուցման հիմնական բովանդակությունն ու ընթացքը, քանի որ մեր հետաքրքրության շրջանակներում է:

Քանի որ մասնագիտական գրականության մեջ եւ բանավոր խոսքում ավելի հաճախ կիրառվում է ոչ ճիշտ բառաձեւը, զեկուցողը նախ պարզաբանեց, որ կուսակցությունը կոչվել է ոչ թե Հայ սահմանադիր, այլ Հայ սահմանադրական, որովհետեւ, նախ, այդպիսին է կուսակցության պաշտոնական ինքնանվանումը, եւ հետո՝ սահմանադիր նշանակում է սահմաններ որոշող, դնող կամ սահմանադրություն գրող, իսկ սահմանադրական՝ որ կուսակցությունն իր էությամբ այդպիսին է եւ գործելու է սահմանադրության կանխագծած շրջանակներում: Այնուհետեւ Ս. Սարգսյանը հայտնեց, որ ինքն էլ հրավիրյալի կարգավիճակում մասնակցել է իրավաբանների համահայկական գիտաժողովին, իր հուզմունքն ու ուրախությունը հայտնեց այն առիթով, որ վերջապես կաշկանդվածության սառույցը հալվում է եւ հայոց պահանջատիրությունն ավելի կոնկրետ ու առարկայական տեսք է ստանում՝ ի դեմս իրավական դաշտում արդեն մոտ ապագայում իշխանությունների մակարդակով համապատասխան միջազգային ատյաններում հարցը դատական հայցի եւ այլ ասպեկտներով ներկայացնելու եւ լուծում պահանջելու առումով: Այդ առիթով Ս. Սարգսյանը շնորհավորեց բոլորին:

Այնուհետեւ զեկուցողն ասաց, որ ժամանակն է Հայկական հարցը դիտարկելու ոչ միայն դիվանագիտության եւ պատմության, այլեւ տնտեսական, տարածքային, ժողովրդագրական, էթնոհոգեբանական եւ այլ տեսանկյուններից: Ապա ընդգծեց, որ պատմագիտության մեջ հարցն ընդհանուր առմամբ վատ չի ուսումնասիրված, բայց մեր մշտապես կուսակցականացված իրականության մեջ կուսակցությունների վերաբերմունքի, նրանց հարցի լուծման առումով իրատեսական եւ ոչ ճիշտ քայլերի առումով շատ քիչ բան է արված, իսկ ՀՍՌԿ-ի դեպքում՝ գրեթե ոչինչ: Զեկուցողի հիմնական ասելիքը հանգում էր մի քանի կարեւոր կետերի.

1. Թեեւ մասնագիտական գրականության մեջ տարածված է տեսակետ, որ Հայկական հարցը Լոզանի կոնֆերանսում վերջնականապես թաղվեց, սակայն դա իրականությանը չի համապատասխանում: Այն առկա է նաեւ մեր օրերում Հայ դատ անունով եւ նրա արդարացի լուծման համար պայքարն այսօր էլ շարունակվում է, իսկ Արցախյան հերոսամարտը դրա իրական եւ հաղթական դրսեւորումներից է:

2. Հայ ավանդական բոլոր կուսակցություններն ստեղծվել են մեկ հիմնական նպատակի՝ Հայկական հարցին լուծում տալու համար, այլ հարց է, որ նրանք ընտրել էին տարբեր մարտավարություններ: ՀՍՌԿ-ն ձեւավորման հենց սկզբից որդեգրեց աստիճանական բարեփոխումների ճանապարհը: Կուսակցության քաղաքական իդեալը Թուրքիան շվեյցարական տիպի կոնֆեդերացիայի վերածելն էր, որի դեպքում Հայկական հարցը կունենար լավագույն լուծումներից մեկը: Անկասկած, վաղ միջնադարյան մակարդակում գտնվող Թուրքիայի համար այդպիսի ելքը երազային էր, սակայն բացառապես տեղացի լինելով, ռամկավարները լավ գիտեին թուրքական բռնակալական իրականությունը եւ չէին կարող իրականությունից կտրված հուզառատ ու անիրագործելի ծրագրեր առաջարկել:

3. Թեեւ ՀՍՌԿ-ն շատ հզոր չեղավ, սակայն միշտ քայլեց ուղիղ եւ առանց տարաբնույթ ազդեցություններին կուլ գնալու: Նա մյուսների նման սիրախաղերի մեջ չմտավ ոչ Իթիլաֆի եւ ոչ էլ Իթթիհադի հետ եւ միշտ մնաց ինքնապաշտպանության ջատագովի դերում: Փաստ, որը լիովին արդարացրեց իրեն, քանի որ Հայոց ցեղասպանության բարձրակետ 1915 թ., Վան-Վասպուրականում, որտեղ էին հիմնականում գործում նրանք, շնորհիվ ռամկավարների այդ իրատեսական մոտեցումների, իրական ոչնչացումից փրկվեց 150-հազարից ավելի հայություն եւ դա իր արդյունավետությամբ միակն էր արեւմտահայ ինքնապաշտպանական կռիվներում:

4. ՀՍՌԿ-ն միշտ սատարեց Պողոս Նուբարի ազգային պատվիրակությանը եւ բոլոր հնարավոր միջոցներով նպաստեց նրա արդյունավետ գործունեությանը:

5. Հայաստանի անկախության նվաճումից հետո կուսակցությունը լայն գործունեություն ծավալեց ՀՀ-ում, որդեգրեց կառուցողական ընդդիմադիրի կեցվածք, սակայն անում էր ամեն ինչ սովի եւ համաճարակների ճիրաններից ժողովրդին փրկելու համար: ՀՍՌԿ-ն ՀՀ տեղափոխեց իր պաշտոնաթերթ «Վան-Տոսպը» եւ սկսեց հրատարակել «Ժողովրդի ձայնը», որը, մասնավորապես, իր ուշադրության կենտրոնում էր պահում արեւմտահայ գաղթականության, ցեղասպանությունից մազապուրծ որբերի, համաճարակների հաղթահարման եւ այլ հրատապ խնդիրների լուծման համար: Կուսակցությունը փորձեց նույնիսկ 20 ռազմական օդանավ գնել ու նվիրել հայրենիքին:

6. Կուսակցության «Վան-Տոսպ», **«Ազգ»**, «Նոր կեանք» եւ այլ պարբերականներն ու տեսաբաններ Վարդան Պապիկյանը, Միհրան Տամասյանը, Արշակ Դարբինյանը եւ մյուսները շարունակաբար հանդես էին գալիս հրապարակումներով, որոնցում ներկայացնում էին ՀՍՌԿ-ի դիրքորոշումները հրատապ խնդիրների վերաբերյալ եւ կոչ էր արվում լինել զգոն եւ անել ամեն ինչ անել նախ թուրքական հրոսակներին դիմակայելու եւ հայության հրաշքով փրկված հատվածը բնաջնջումից զերծ պահելու համար:

7. ՀՍՌԿ-ն, միավորվելով նույն գաղափարական դավանանքները որդեգրած այլ քաղաքական ուժերի հետ, 1921 թ. ստեղծեց Ռամկավար Ազատական կուսակցությունը, որը մինչեւ օրս էլ հետամուտ է Հայկական հարցի արդարացի լուծմանը:

Ավելացնենք, որ զեկուցումը լսվեց մեծ հետաքրքրությամբ, որի առհավատչյան հարցերի այն տարափն էր, որ հաջորդեց զեկուցմանը: Մեր ժողովրդի համար ճակատագրական այդ շրջանում Հայկական հարցի, ցեղասպանության, հայ ժողովրդի գոյակռվի, նորաստեղծ Հայաստանի Հանրապետության, ռուսական փետրվարյան հեղափոխության ու հոկտեմբերյան հեղաշրջման, ՀՀ ներքին ու արտաքին քաղաքականության ու Պողոս Նուբարի պատվիրակության, Խորհրդային Հայաստանի նկատմամբ ՀՍՌԿ-ի դիրքորոշումների եւ այլ խիստ կարեւոր խնդիրների վերաբերյալ հարցեր տվեցին ակադեմիկոս Վ. Բարխուդարյանը, թղթակից անդամ Ա. Մելքոնյանը, պրոֆեսորներ Ն. Սարուխանյանը, Է. Կոստանդյանը եւ ուրիշներ: Բոլոր հարցերին տրվեցին կոնկրետ եւ սպառիչ պատասխաններ:

Ընդհանուր առմամբ լսվեցին յոթ զեկուցումներ, որոնք բոլորն էլ հետաքրքրական էին ու բովանդակալից, սակայն առանձնապես աչքի չընկան մտքերի թարմությամբ: Հստակ էր մեկ բան, որ նմանատիպ հրատապ եւ առարկայական քննարկումներով առլեցուն գիտաժողովներն անհրաժեշտ են թե՛ գիտական, թե՛ գործնական առումներով: Քանի որ դրանցում են վեր հանվում անցյալի մութ էջերը, մատնացույց արվում թույլ տված սխալները եւ ապագայում դրանցից խուսափելու հնարավորություն ընձեռում: Շեշտվեց նաեւ, որ նմանատիպ գիտագործնական կոնֆերանսների եզրահանգումները կարեւոր են ՀՀ արտաքին քաղաքականության շատ հարցերի ըմբռնման տեսանկյունից:

**ՍԱՐԳԻՍ Թ. ՊԵՏՐՈՍՅԱՆ,**

# «Օրերի» հերթական համարը՝ նվիրված Սայաթ-Նովային

**«Օրերի» հերթական համարը նվիրված է հայ մեծանուն աշուղ-բանաստեղծ Սայաթ-Նովային: 2012-2013-ին Հայաստանում նշվում է հայ միջնադարյան քնարերգուի 300-ամյակը:**

**Նկատի ունենալով սայաթնովայագիտության մեջ եղած տարբեր կարծիքներն ու մոտեցումները՝ բանաստեղծի ոչ միայն ստեղծագործությանը, նաեւ ծննդյան ու մահվան տարեթվերին եւ այս առիթով առկա գրական բանավեճերը, «Օրերի» այս համարը հիշյալ հարցերի պատասխանները փորձել է տալ՝ ներկայացնելով կարեւոր տարեթվերի քաղհանված տվյալներ՝ վերջին 40 տարիներին սայաթնովայագիտությամբ զբաղվող Ասլան Ասլանյանի «Սայիադ-Նովա» գրքից:**

**Հայ բանասիրության մեջ Սայաթ-Նովայի ծննդյան տարեթվի շուրջ տարակարծիքները մի քանիսն են, ինչպես Ախվերդյանն է կարծում՝ դա 1712-ն է, Շահսուվարյանի կարծիքով՝ 1713 թ., 1717 թ., ըստ Հասրաթյանի, իսկ Պ. Սեւակն ու Հ. Բախչինյանն ընդունում են 1722 թվականը: Ասլան Ասլանյանը, հենվելով բացառապես Սայաթ-Նովայի ձեռագիր Դավթար մատյանի վրա, տասնյակ անգամներ հաստատում է իր այն տեսակետը, ըստ որի՝ բանաստեղծը ծնված պետք է լինի 1707 թվականին: Անվան հետ կապված՝ ուսումնասիրողն օգտագործել է Սայիադ-Նովա ձեւը, ինչպես բանաստեղծն է իր ձեռագրում գրել:**

**«Օրերի» այս համարը այսպես կոչված երաժշտական է: Հակոբ Ասատրյանի հարցազրույցներում իրենց գործունեության ապագա ծրագրերի, մոտեցումների մասին են խոսում երգիչ Գուրգեն Դաբաղյանը, դուդուկահար Գեւորգ Դաբաղյանը, դաշնակահար Տիգրան Համասյանը, ջութակահար Նարինե Դելլալյանը, դիրիժորներ՝ Փիթըր Ունջյանը, Վահան Մարտիրոսյանը, սոպրանո Հասմիկ Պապյանը, «Երեւանյան ձայները» եւ ուրիշներ:**

**Անդրադառնանք հանդեսի՝ մեզ առավել ուշագրավ թվացող մի քանի նյութերին:**




**Տարիներ առաջ Հայաստանից Լոս Անջելես տեղափոխված երիտասարդ, տաղանդավոր դաշնակահար Տիգրան Համասյանը արտերկրում կարողացավ տպավորիչ ճանապարհ անցնել. 2006-ին արդեն նա հեղինակավոր Thelonious Monk jazz դաշնամուրային մրցույթի հաղթող դարձավ: 2011-ին հրատարակած իր Universal ալբոմը Փարիզում արժանացավ ֆրանսիական Գրեմիի: Մեծ ընդունելության արժանացավ Shadow Theater ալբոմը: Այս տարի նա դարձյալ շահեց երաժշտական կարեւոր մի մրցանակ:**

**«Օրերի» խմբագրի զրույցը Տիգրանի հետ տեղի է ունեցել անցած տարի ապրիլին, դաշնակահարների՝ չեխական Զագֆեստբռնո միջազգային երաժշտական փառատոնի մասնակցության օրերին: Տիգրան Համասյանը հրաշալի մի քանի համերգ նախորդ տարիներին ունեցավ նաեւ այստեղ՝ Երեւանում եւ վստահաբար տպավորեց հանդիսականին: Նրա ելույթների անդրադարձները արդեն հայտնվում են միջազգային՝ ամերիկյան, եվրոպական լրատվամիջոցների ծրագրերում, մամուլի հրապարակումներում:**

**Տիգրան Համասյանի երաժշտական մոտեցումները հայտնի են դառնում ժողովրդական-հոգեւոր իմպրովիզացիաների ներկայացված արտահայտչամիջոցներով, իր համար առաջնային են հատկապես հայ ժողովրդական երգերն ու դրանց մշակումները. «Հայկական հոգեւոր երաժշտությունը շատ խորն է, շատ հին է եւ իր մեջ կրում է նաեւ հեթանոսական եւ ժողովրդական երաժշտության տարրեր, եւ ինձ թվում է, այդ հոգեւոր մեղեդիները եկել են ժողովրդական երաժշտությունից: Նարեկացին հայկական երաժշտություն է, իսկ Կոմիտասն ու Եկմալյանն արդեն երգչախմբերի համար ֆենոմենալ մշակումներ են արել»:**

**Հաջորդ հետաքրքրական զրույցը Հայաստանի կամերային նվագախմբի գլխավոր դիրիժոր Վահան Մարտիրոսյանի հետ է: Նա այս տարվա մայիսին բացումը կատարեց չեխական Օստրավայի «Յանաչեկի մայիս» 37-րդ միջազգային փառատոնի՝ ղեկավարելով չեխական ռադիոյի սիմֆոնիկ նվագախմբի ելույթը: Հետաքրքրական է, որ այս տարի Պրահայի 68-րդ միջազգային երաժշտական «Պրահայի գարուն» փառատոնը նույնպես բացվել է հայազգի դիրիժորի ղեկավարությամբ: Ֆրանսիական ռադիոյի ֆիլհարմոնիկ նվագախումբը հանդես է եկել կանադահայ Փիթեր Ունջյանի դիրիժորությամբ, որի հետ հետաքրքրական զրույց է ծավալել Հակոբ Ասատրյանը:**

**Կարեւոր է գերմանական Բրանդենբուրգի երկրամասի Պրյոթցել ավանում արդեն 2-րդ անգամ տեղի ունեցած (հունիսի 1-ին) «Կոմիտաս» միջազգային փառատոնի մասին տեղեկությունը:**

**Հանդեսում ներկայացված են երաժշտական կյանքին վերաբերող մի շարք հարցազրույցներ, տեղեկություններ (ՀԲԸՄ Ֆրանսիայի Սայաթ-Նովա միջազգային մրցույթի, Արամ Խաչատրյանի 110-ամյակին նվիրված հետաքրքրական համերգի եւ այլ իրադարձությունների մասին): Հրապարակված է նաեւ հետաքրքրական հարցազրույց դերասանուհի, արձակագիր Անահիտ Թոփչյանի հետ, ինչպես նաեւ տեղեկություններ Չեխիայի մշակույթի նախարար Ալենա Հանակովայի հայաստանյան այցի, ամերիկաբնակ քանդակագործ Տիգրան Սարգսյանի, նաեւ չեխ-հայկական հրաշքի՝ «Մարլենկայի» 10-ամյակի մասին եւ այլ նյութեր:**

**Մ. Բ.**

ԱԴՐԲԵՋԱՆ

# Մուբարիզ Գուրբանլիի «թվաբանությունը»

Իշխող «Ենի Ազարբայջան» կուսակցության գործադիր քարտուղարի տեղակալ, Միլլի մեջլիսի պատգամավոր Մուբարիզ Գուրբանլին երեկ լրագրողներին ասել է, որ նախագահի ընտրության հետ կապված «քարոզչական միջոցառումները կսկսվեն սեպտեմբերի 18-20-ին»: Կուսակցությունը նախատեսում է ի պաշտպանություն Իլհամ Ալիեւի թեկնածության գրանցման «հավաքել ավելի քան մեկ միլիոն ստորագրություն», երբ օրենքով այդ թիվը 40 000 է:

Գուրբանլիի ասելով, Ադրբեջանում «բոլոր ընտրություններն աչքի են ընկել ընտրողների ակտիվ մասնակցությամբ»: Նա նաեւ որոշակի կանխատեսումներ է արել, թե ովքեր են քվեարկելու Իլհամ Ալիեւի օգտին:

Առաջին հերթին նա նշել է «Ենի Ազարբայջան» կուսակցության ավելի քան 600 000 անդամներին, որ «թեկնածու են առաջադրել Իլհամ Ալիեւին»: Գուրբանլին կարծում է, որ Իլհամ Ալիեւի օգտին քվեարկելու են նաեւ այլ կուսակցությունների անդամներ, միլիոնավոր անկուսակցականներ, որ «պաշտպանում են Իլհամ Ալիեւի քաղաքականությունը»:

Ամենահետաքրքրական հաշվարկը, որ հնչեցրել է իշխող կուսակցության գործադիր քարտուղարի տեղակալը, վերաբերել է ընդդիմադիր ընտրազանգվածին: Նրա գնահատմամբ, կատարված ուսումնասիրությունները «ցույց են տվել, որ արմատական եւ կառուցողական ընդդիմության համակիրների ընդհանուր թիվն ավելին չէ, քան բոլոր ընտրողների առավելագույնը 4 տոկոսը»:

Ըստ այդմ, հոկտեմբերին կայանալիք նախագահական ընտրություններում Իլհամ Ալիեւը «կստանա ընտրողների ձայների 96 տոկոսը»: Ավելի վաղ, մինչդեռ, «Ենի Ազարբայջանի» գործադիր քարտուղար Ալի Հասանովը վստահեցրել էր, որ «Իլհամ Ալիեւը նախընտրական քարոզչություն չի անի, դրա կարիքը չկա, քանի որ նրա փոխարեն խոսում են իր կատարած գործերը»:

Մինչ իշխանություններն արդեն իսկ տոնում են Իլհամ Ալիեւի «համոզիչ հաղթանակը», ընդդիմությունը երեկ Մոսկվայում եւ Բաքվում երկու միջոցառում է անցկացրել: ՌԴ մայրաքաղաքում կինոռեժիսոր Ռուստամ Իբրահիմբեկովը հանդիպել է Ռուսաստանի, Եվրոպայի եւ Թուրքիայի «ադրբեջանական համայնքների ներկայացուցիչների հետ»:

Վերջիններս հավաստիացրել են, որ ընտրություններում «կպաշտպանեն Իբրահիմբեկովի թեկնածությունը»: Իսկ Բաքվում այսպես կոչված Ժողովրդավարական ուժերի ազգային խորհրդի «Ղարաբաղի հարցով հանձնաժողովը» գումարել է անդրանիկ նիստը: Հանձնաժողովը գլխավորում է պատմաբան Ջամիլ Հասանլին:

Նա իշխանություններին մեղադրել է «Ղարաբաղի հարցը բացառապես նախագահի վերահսկողությանը թողած լինելու» համար եւ ասել, որ «հասարակությունը ոչ մի տեղեկություն չունի բանակցությունների ընթացքից»: Հասանլին նաեւ խստագույնս դատապարտել է ադրբեջանական հեռուստաընկերությունների գործունեությունը, որոնք «տեսասփռում են այնպիսի հաղորդումներ եւ ծրագրեր, որոնք բարոյազրկում են մարդկանց, նպաստում, որ ժողովուրդը մոռանա Ղարաբաղի խնդիրը»:

«Այդ նպատակն են հետապնդում նաեւ միջազգային կառույցները, որոնց ցանկությունն է, որ ադրբեջանական հասարակությունը հաշտվի ներկա դրության հետ»,- պնդել է Ջամիլ Հասանլին: Նա ասել է, որ իրենք «ձեռնամուխ են եղել ԼՂ խնդրի կարգավորման հայեցակարգի մշակմանը», սակայն որեւէ մանրամասնություն չի փոխանցել: Ժողովրդավարական ուժերի ազգային խորհրդի կազմավորմանը հաջորդած ամբողջ ժամանակաշրջանում իշխանահաճ լրատվամիջոցներն ու քաղաքական շրջանակները Ռուստամ Իբրահիմբեկովի հասցեին հնչեցնում են քննադատություն, որ նա «Ղարաբաղի հարցում տեսակետ չի արտահայտում»:

Վերջին հարցազրույցներից մեկում Իբրահիմբեկովը կարծիք էր հայտնել, որ «Լեռնային Ղարաբաղը ոչ միայն տարածք է, այլեւ այնտեղ ապրող հայ բնակչություն», ինչի առթիվ արժանացել էր «հայամետ գործիչ» որակման: Կարելի է ենթադրել, որ Մուբարիզ Գուրբանլիի նշած թվերը նկարելու համար իշխանություններն ավելի են սաստկացնելու հակահայ քարոզչությունը եւ պատերազմական հռետորաբանությունը, որպեսզի նկատել տրվի, թե «Ղարաբաղի հարցում ժողովրդի եւ Իլհամ Ալիեւի մոտեցումները նույնական են»:

ՎԱՀՐԱՄ ԱԹԱՆԵՍՅԱՆ

# Արքայազն Չառլզը վատ հարկատու է

Մեծ Բրիտանիայի հաշվիչ պալատը հետաքրքրվում է Ուելսի իշխան Չառլզի հարկային գործերով. Էլիզաբեթ Բ թագուհու ավագ որդու անձնական քարտուղար Ուիլյամ Նայը շուտով պետք է հաշվետվություն ներկայացնի այդ գերատեսչությանը, հաղորդում է BBC-ն:

Ուիլյամ Նայը ստիպված կլինի բացատրել, թե ինչու Չառլզը եւ նրա կինը՝ Կոռնուոլի դքսուհի Կամիլլան խուսափում են կապիտալի աճի հարկ վճարել:

Առաջին անգամը չէ, որ թագավորական ընտանիքի հարկային գործերն արժանանում են համապատասխան մարմինների ուշադրությանը, նշում է BBC-ն: Անցյալ անգամ Չառլզի ներկայացուցիչները ստիպված էին հաշիվ տալ Պետական հաշիվների կոմիտեին, երբ Ուելսի իշխան Չառլզին կասկածել էին բնակարանային պետնպաստների ստացման համար զանազան ֆինանսական խորամանկություններին դիմելու մեջ: Լրագրողները նշում էին, որ հնարքները նրան թույլ տվեցին օգտվել «աշխարհում բնակարանային օգնության լավագույն սխեմայից»:

Կոռնուոլի դքսությունը գնահատվում է ավելի քան 700 մլն ֆունտ ստեռլինգ, Չառլզին բերել է 18 մլն ֆունտ եկամուտ, եւ խորհրդարանի հանրապետական պատգամավորները կարծում են, որ արքայազնը պարտավոր էր տվյալ գումարից հարկեր վճարել: Մինչդեռ թագավորական ընտանիքի ներկայացուցիչները հայտարարում են, թե դքսությունը մասնավոր հողային սեփականություն է եւ ոչ թե ֆիրմա կամ հասարակական կազմակերպություն: Ուստի, նրանց կարծիքով, դքսությունը չպետք է նմանօրինակ հարկման ենթարկվի:

# Մեքսիկական «Սետաս» թմրակարտելի պարագլուխը ձերբակալվել է

Մեքսիկայի իշխանությունները հաղորդում են, որ ծովային հետեւակի հատուկ գործողության ընթացքում ԱՄՆ-ի սահմանի մոտ ձերբակալվել է «Սետաս» թմրակարտելի պարագլուխ Միգել Անխել Տրեւինյոն: Ֆրանսպրեսը նշում է, որ նրա հետ մեկտեղ ձերբակալվել են եւս երկու անձինք:

Տրեւինյոն «Սետասի» պարագլուխն էր դարձել 2012-ի վերջերին, երբ նախորդ պարագլուխ Էրիբերտո Լասկանոն սպանվել էր ոստիկանության հետ փոխհրաձգության ժամանակ:

Ասոշիեյթեդ պրես գործակալությունը մանրամասնում է, որ Տրեւինյոն կասկածվում է թմրադեղերի հատկապես խոշոր չափերի շրջանառության, ինչպես նաեւ տասնյակ մեքսիկացիների եւ լատինամերիկացի ներգաղթյալների սպանությունների մեջ:



Տրեւինյոն առաջին խոշոր թմրաբարոնն է, որ ձերբակալվում է 2012-ի դեկտեմբերից պաշտոնավարող նախագահ Էնրիկե Պենյայի օրոք: Նրա նախորդի՝ Ֆելիպե Կալդերոնի օրոք ձերբակալվել կամ սպանվել էին թմրամաֆիայի երկու տասնյակ խոշոր հանցագործներ:

Մեքսիկայում 2006-2012 թթ. թմրակարտելների պատերազմի ընթացքում 70 հազար մարդ է սպանվել:

«Սետաս» թմրակարտելը Մեքսիկայի առավել ազդեցիկ հանցավոր կազմակերպություններից մեկն է եւ աչքի է ընկնում իր դաժանությամբ: Հիմնադիրները նախկին զինծառայողներ են: Սկզբում «Սետասը» կապված էր «Կարտել դել Գոլֆոյի» հետ, բայց 2010-ին երկու խմբավորումները բաժանվեցին եւ արյունահեղ բախումներ սկսեցին Մեքսիկայի հյուսիսում:

ԵԳԻՊՏՈՍ

# Ոստիկանության եւ ցուցարարների բախումներ Կահիրեում



Հուլիսի լույս 16-ի գիշերը Եգիպտոսի մայրաքաղաք Կահիրեում տեղի են ունեցել բախումներ ինչպես տապալված նախագահ Մուհամմեդ Մուրսիի կողմնակից իսլամիստների եւ նրանց հակառակորդների, այնպես էլ իսլամիստների եւ ոստիկանների միջեւ: Քաղաքի շտապ օգնության ծառայության ղեկավարին վկայակոչելով՝ Ֆրանսպրես գործակալությունը հաղորդում է, որ սպանվել է 7 մարդ, կա 261 վիրավոր: Երկու մարդ սպանվել է Կահիրեի կենտրոնում գտնվող մի կամրջի մոտ, մնացյալ հինգը՝ Գիզե թաղամասում:

«Ֆիգարո» թերթը հավելում է, որ այդ զանգվածային բախումները վերջին մեկ շաբաթվա ընթացքում Կահիրեում տեղի էին ունենում առաջին անգամ եւ համընկան ԱՄՆ պետքարտուղարի տեղակալ Ուիլյամ Բըռնսի այցելությանը, որին Եգիպտոսում ընդունել են «առանց ոգեւորության»:

Մուրսիի կողմնակիցները, որոնց մեծ մասը «Մուսուլման եղբայրներ» իսլամիստական շարժման հետեւորդներ են, պահանջում են ազատ արձակել ձերբակալված նախագահին, մինչդեռ Եգիպտոսի իշխանությունները մտադրվել են դատել նրան: «**Ազգը**» երեկ գրեց, որ Մուրսիին կարող է ներկայացվել մասնավորապես պետական դավաճանության մեղադրանք:

Եգիպտական Մենա գործակալությունը հաղորդում է, որ իսլամիստ ցուցարարներին ցրելիս ոստիկանությունը ստիպված ուժ է գործադրել, որպեսզի թույլ չտա Նեղոսի կամուրջներից մեկի շրջափակումը: Մուրսիի տասնյակ-հազարավոր կողմնակիցներ փակել էին Կահիրեի մայրուղիները: Հուլիսի 16-ի առավոտյան «Հոկտեմբերի 6» մայրուղու վրա շարունակվում էին իսլամիստների եւ ոստիկանների բախումները: Վերջիններս ամբոխին ցրելու համար օգտագործել են արտասվաբեր գազի նռնակներ:

Պ. Ք.

# Մալթան խնդրում է իրեն փրկել ներգաղթյալներից




Սիցիլիայից հարավ ընկած Մալթա փոքրիկ կղզի-պետությունը պարզապես ճնշահեղձ է լինում Էրիթրեայից եւ Սոմալիից եկող անօրինական ներգաղթյալների հոսքից: Պատահական չէ, որ կղզու իշխանությունները Եվրոմիությանը խնդրում են փոխել ներգաղթի քաղաքականությունը:

Մալթայի վարչապետ Ջոզեֆ Մուսկատը աֆրիկացի փախստականների հերթական խմբի «ժամանումից» հետո հայտարարել է, որ ԵՄ մյուս երկրները Մալթային մեն-մենակ են թողել անօրինական ներգաղթի խնդրի դեմ հանդիման:

Ինչպես նշում է newsru.com կայքէջը, փախստականների հետ կապված իրավիճակը սրվեց անցյալ շաբաթ. Մարդու իրավունքների եվրոպական դատարանի եւ ներքին գործերի գծով եվրոհանձնակատար Սեսիլիա Մալմստրյոմի միջամտությունից հետո Մալթան չեղյալ հայտարարեց այն բոլոր չվերթերի ամրագրումը, որոնք պետք է Լիբիա վերադարձնեին անօրինական ներգաղթյալներին:

Իշխանությունների տվյալներով, միայն անցյալ շաբաթ նավակներով Լիբիայից կղզի-պետություն են մուտք գործել 400 ներգաղթյալներ: Նրանցից շատերը Լիբիա էին եկել Էրիթրեայից եւ Սոմալիից:

Այն ժամանակ Ջոզեֆ Մուսկատը հայտարարել էր, որ «հարգում է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռները եւ չի ընդդիմանում միջազգային համաձայնագրերին», սակայն «նոր ուղիներ կփնտրի պետության շահերը պաշտպանելու համար»:

Մալթան եվրոպական երկրների մեջ առաջին տեղն է զբաղեցնում հազար բնակչին ընկնող փախստականների թվով: Անցյալ տարի հազար մալթացուն ընկել է ապաստան հայցող 21,7 մարդ:

Պ. Ք.

ԵՐԵՎԱՆ

# Մատենադարանը՝ արաբատառ ձեռագրերի ուսումնասիրման կենտրոն

Երեւանի Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի հավաքածուի ավելի քան 18 000 ձեռագրերից շուրջ 3000-ը կազմում են արաբատառ ձեռագրերը (արաբերեն, պարսկերեն, օսմաներեն եւ այլն): Դրանց նկարագրումը եւ ուսումնասիրումը Մատենադարանի գործունեության կարեւոր ուղղություններից է:

Այս առումով խոստումնալից համագործակցություն է ծավալվել Մատենադարանի եւ Արաբատառ ձեռագրերի միջազգային ընկերակցության միջեւ, որի շրջանակներում սույն թվականի հունիսի 18-22-ը առաջին անգամ Հայաստանում կազմակերպվեց Արաբատառ ձեռագրերի նկարագրման ներածական դասընթաց՝ օժանդակությամբ Տեսաուրուս Իսլամիկուս հիմնարկության (Thesaurus Islamicus Foundation):

Մատենադարանի նորաստեղծ Արաբատառ ձեռագրերի բաժնի հրավերով Հայաստան ժամանեց եւ դասընթացը վարեց Լեյդենի համալսարանի պրոֆեսոր, «Journal of Islamic Manuscripts» պարբերականի գլխավոր խմբագիր, վաստակաշատ արեւելագետ Յան Յուստ Վիտկամը:

Դասընթացին մասնակցեցին 30-ից ավելի արեւելագետներ, բանասերներ, պատմաբաններ, ձեռագրագետներ, արվեստաբաններ Հայաստանից եւ արտերկրից:

Դասընթացն իր տեսակի մեջ բացառիկ էր եւ առաջին անգամ էր կազմակերպվում Երեւանում: Հինգ օր տեւած դասընթացը բաղկացած էր առավոտյան (դասախոսություններ) եւ հետկեսօրյա (գործնական պարապմունքներ) մասերից: Առավոտյան նիստերին մասնակցեցին 32 անձ Մատենադարանից, Երեւանի պետական համալսարանից եւ այլ հաստատություններից: Իսկ ամբողջական դասընթացին (դասախոսություններ ու գործնական պարապմունքներ) հետեւեցին թվով 12 անձ Մատենադարանի Արաբատառ ձեռագրերի նկարագրման եւ ուսումնասիրման բաժնից: Դասընթացի յուրաքանչյուր օրը նվիրված էր մի որոշակի խումբ խնդիրների: Այդ մի քանի օրերի ընթացքում աստիճանաբար բացահայտվեցին արաբատառ ձեռագրերի յուրահատուկ կողմերը, առանձնահատկություններն ու բացառիկ նմուշները: Հատուկ դասախոսություններով պրոֆեսոր Վիտկամը անդրադարձավ դարերի ընթացքում օգտագործված գրանյութերին, մագաղաթի ու թղթի տեսակներին, գրքերի ու պրակների կազմմանն ու ձեւավորմանը, գրածեւերին ու նրանց ողջ բազմազանությանը, կազմերի պատրաստմանը, ամենատարբեր նշանների ու պատկերների խորհրդանշական իմաստներին:

Մասնակիցները մեծ հետաքրքրությամբ հետեւեցին ինչպես դասախոսություններին, այնպես էլ գործնական աշխատանքներին: Դասընթացն անկասկած կնպաստի Հայաստանում պահվող արաբատառ ձեռագրերի նկարագրման եւ ուսումնասիրման աշխատանքներին: Երեւանի Մաշտոցյան Մատենադարանը եւ Արաբատառ ձեռագրերի միջազգային ընկերակցությունը շարունակելու են գիտական ու կրթական կապերը, որոնց արդյունքում նոր, հետաքրքրական ծրագրեր կիրականացվեն մոտ ապագայում:

*Երեւանի Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարան*

# Համազգային հայ կրթական եւ մշակութային միություն

## *«ԼԵՎՈՆ ՇԱՆԹ» թատերգության մրցանակաբաշխությունն ամփոփվում է*

Այսօր, հուլիսի 17-ին, ժամը 14:00-ին, Հայաստանի թատերական գործիչների միության դահլիճում (Մաշտոցի 13), տեղի կունենա «Համազգային հայ կրթական եւ մշակութային միության» «Լեւոն Շանթ» թատերգության մրցանակաբաշխության արդյունքների ամփոփման եւ մրցանակների արժանացած դրամատիկական ստեղծագործությունների հեղինակների պարգեւատրման արարողությունը:

2013-ի տարեսկզբին հայտարարված «Լեւոն Շանթ» թատերգության մրցանակաբաշխությունը ժամանակակից հայ թատերգությունը խթանելու, ժանրում ստեղծագործող նոր անուններ, թատերգության ժամանակակից ուղղություններ բացահայտելու նպատակ ուներ:

Մրցույթին մասնակցել են 51 հեղինակներ Հայաստանից, Արցախից եւ Սփյուռքից:

Մրցանակային տեղերը հինգն են՝ I, II, III եւ երկու խրախուսական:

Մրցանակաբաշխությանը ներկայացված լավագույն պիեսները կհրատարակվեն առանձին ժողովածուով, իսկ առաջին տեղին արժանացած պիեսը կբեմադրվի «Համազգային»-ի աջակցությամբ:

*Մրցույթի կազմկոմիտե*

# Մաեստրո Տիգրան Մանսուրյանի հեղինակային երեկոն

Երաժշտասերները հրավիրում են այսօր, հուլիսի 17-ին, ժամը՝ 20:00-ին, Թալալյան եղբայրների անվան միջազգային ամենամյա 4-րդ փառատոնի շրջանակներում կայանալիք մաեստրո Տիգրան Մանսուրյանի հեղինակային երեկոյին: Համերգը տեղի կունենա Գաֆէսճեան արվեստի կենտրոնի հատուկ միջոցառումների սրահում (հասցե՝ՀՀ, ք. Երեւան, Կասկադ համալիր): Երեկոյի ընթացքում հանդես կգա նաեւ կոմպոզիտորը:

Համերգի ընթացքում կհնչեն կոմպոզիտորի ստեղծագործությունները Իրինա Զաքյանի (սոպրանո), Յանա Դարյանի (ալտ), Նելլի Մանուկյանի (ֆլեյտա), Ջուլիետա Վարդանյանի (դաշնամուր), Գերմանիայից Հովհաննես Մոնկացյանի (ջութակ), Արամ Թալալյանի (թավջութակ) կատարմամբ:

Թալալյան եղբայրների անվան միջազգային ամենամյա 4-րդ փառատոնի շրջանակներում մինչեւ հուլիսի 23-ը նախատեսվում է համերգային ծրագրերի շարք:

# Գոդֆրի Ռեջջո. «Ես ֆիլմերը չեմ ստեղծում, որ հանդիսատեսը հավանի»

***Գոդֆրի Ռեջջոն, որը հայտնի է կինոաշխարհում իր «Կացի» եռերգությամբ՝ տեսողական պատկերահնչյունային էսսեների շարքով, հետաքրքրական մի ձեռագիր ունի՝ նրա ֆիլմերը մեծ ազդեցություն է ունենում մարդու վրա:***

***1940-ին Նյու Օռլեանում ծնված եւ Լուիզիանայում մեծացած Ռեջջոն 14 տարի է անցկացրել Քրիստոնյա Եղբայրների հռոմեադավան կաթոլիկական ուխտի մենաստանում՝ ապրելով աղոթքին եւ ուսմանը նվիրված կյանք: 1960-ականների հաստատվելով Նյու Մեքսիկոյում՝ Ռեջջոն դասավանդել է դպրոցում, դասախոսել, դարձել է պատանիների փողոցային հրոսակախմբերով զբաղվող «Գործունակ երիտասարդ քաղաքացիներ» համայնքային կազմակերպչական նախագծի համահիմնադիրը: Այնուհետեւ դարձել է նաեւ Սանտա Ֆեի «La Clinica de la Gente» համայնքային բժշկական կենտրոնի եւ Նյու Մեքսիկոյի հյուսիսային թաղամասերում իրագործվող «La gente» համայնքային նախագծի համահիմնադիրը: 1972-ին Ռեջջոն Սանտա Ֆեի շրջանային կրթության ինստիտուտի համահիմնադիրներից էր. շահույթ չհետապնդող այս հիմնադրամը հետամուտ էր լրատվամիջոցների զարգացմանը, արվեստին, համայնքի կազմակերպչական խնդիրներին եւ հետազոտություններին:***

***«Կոյանիսկացին»՝ կինոռեժիսոր եւ պրոդյուսեր Ռեջջոյի առաջին աշխատանքն է. «Կացի» եռերգության անդրանիկ ֆիլմը: Այն պատկերում է 1975-ից մինչեւ 1982-ն ընկած ժամանակահատվածում երկու տարբեր աշխարհների՝ քաղաքային կյանքի, տեխնիկայի եւ շրջակա միջավայրի աղետալի բախումը: Իսկ կինոնկարի երաժշտությունը հեղինակել է Ֆիլիպ Գլասը:***

***«Ազգ»-ը զրուցեց ռեժիսոր Գոդֆրի Ռեջջոյի հետ.***



**- Վարպետության դաս անցկացնելու ընթացքում հին ու նոր աշխարհների բնութագրումներն էիք տալիս՝ իրենց դրական ու բացասական կողմերով: Ի՞նչը կփոխվեր Ձեր ֆիլմերում, եթե ապրեիք հին աշխարհում:**

- Անկեղծ ասած չեմ կարող ասել, պիտի ապրեի այդ շրջանում ու տեսնեի:

Ամենակարեւորը՝ լինել այդ վայրում, շփվել բնության հետ, որից հետո էլ նոր կարող եմ ասել, թե ինչ ազդեցություն կունենա: Սակայն այժմ, տեխնոլոգիայի զարգացումը մեզ կախվածության մեջ է պահում, սակայն անհրաժեշտ է օգտվել ժամանակակից նոր միտումներից, բայց չդառնալ դրանց գերին:

**- Դիտելով Ձեր «Այցելուները» ֆիլմի առաջին հատվածը, տեսա հոգեկան ծանր վիճակ, ցավ, տառապանք, դառնություն: Արդյոք ֆիլմը նկարահանելու ժամանակ դուք հոգեկան այդ վիճակո՞ւմ էիք գտնվում ու դա պորթկում էր:**

- Ոչ, նման ապրումներ ունենում եմ ֆիլմը նկարահանելուց հետո: Ես գիտեի, որ դա տեղի է ունենալու ու դրան էի նախապատրաստվում: Նկարահանման գործընթացի ժամանակ միայն հետեւում եմ լույսին, տեխնիկական մասին: Այդ ամբողջ ապրումները՝ ցավը, տառապանքը, դառնությունը ես ունեցա, երբ ֆիլմը նայեցի վերջնական տարբերակով:

**- Երբ նայում եմ Սալվադոր Դալիի նկարները եւ Ձեր ֆիլմը, նույն անբացատրելի զգացողությունն եմ ունենում: Արդյոք Դալին Ձեր վրա մեծ ազդեցություն է ունեցել:**

- Ոչ, իրականում ես Սալվադոր Դալիի արվեստի երկրպագու չեմ, այլ՝ Լուիս Բունուելի ու Պաբլո Պիկասոյի: Նրանք ինձ վրա մեծ ազդեցություն են ունեցել, իսկ Դալիի ստեղծագործությունները՝ ոչ:

**- Ձեր նկարահանած ֆիլմերը դիտելիս հիպնոսի ես ենթարկվում ու անջատվում է ուղեղդ: Ինչպես եք այդ հնարքը կիրառում եւ կա արդյոք ինչ-որ բան, որից ոգեշնչվում եք:**

- Ֆիլմը հիպնոզի է ենթարկում, քանի որ ֆիլմի կադրերը շատ դանդաղ են: Մենք սովոր չենք դանդաղ տեսարաններ տեսնել նաեւ առօրեայում: Ընդհանրապես կադրի միջին տեւողությունը 2 վայրկյան է, իսկ իմ ֆիլմերում յուրաքանչյուր կադրի միջին տեւողությունը 70 վայրկյան է: Մենք սովոր չենք նման բաներ տեսնելու, իսկ երբ տեսնում ենք, այն մեզ հիպնոզի է ենթարկում:

**- Տասը տարի եք աշխատել «Այցելուները» ֆիլմի վրա: Այդ ընթացքում չի՞ եկել մի ժամանակ, որ հոգնեք այդ գործընթացից:**

-Նման ֆիլմեր ստեղծելու կարեւորությունը կայանում է նրանում, որ երբեք չես հրաժարվում նրանից: Դա նման է երկար տարածություն վազող մարզիկի, որը ճանապարհի կեսին որոշի նստել ու հանգստանալ: Այդ դեպքում նա չի հասնի այն արդյունքին, ինչին ցանկանում է: Իմ համբերատարության շնորհիվ է, որ հասել եմ այս ամենին: Գիտեմ, որ պետք է համբերել, որ վերջում ստացվի:

**- Ձեր ֆիլմերը սիրվում են հանդիսատեսի կողից, իսկ քննադատություններին ուշադրություն դարձնո՞ւմ եք:**

- Միշտ ստեղծում եմ առիթներ, որ հանդիսատեսի հետ երկխոսությունս կայանա, շփվեմ նրա հետ, քանի որ նրա կարծիքն ինձ համար շատ կարեւոր են: Սակայն նշեմ, որ իմ ֆիլմերը բոլորի համար չեն ստեղծված, դրանք հոլիվուդյան ֆիլմերի նման չեն, որ սիրվեն բոլորի կողմից: Իմ ֆիլմերն ստեղծված են հատուկ մարդկանց համար:

**- Քննադատությունները ազդո՞ւմ են ֆիլմի կոմերցիոն հաջողության վրա:**

- Ես ֆիլմերը չեմ ստեղծում, որ հանդիսատեսը հավանի, այլ ես եմ իմ ֆիլմերի առաջին հանդիսատեսը ու ես հավատում եմ իմ ստեղծածին: Նկարիչը, երբ նկարում է, գույները չի համադրում այնպես, որ մշակութասերին դուր գա, այլ անում է ինքն իր համար, որ իրեն հաճելի լինի:

**- Ըստ Ձեզ, որպես ռեժիսոր՝ կոմերցիոն ֆիլմի համար ո՞րն է ամենակարեւորը՝ դերասանական աստղային խո՞ւմբը, լավ սցենա՞րը, թե՞ ֆինանսական կողմը:**

- Նման ֆիլմերի համար, այս երեքն էլ կարեւոր են, բայց ամենակարեւորը դերասաններն են: Եթե, օրինակ, Շվացնեգերն է խաղում, ապա բոլորը գնում են ֆիլմը դիտելու, սակայն դա չի նշանակում, որ ֆիլմը լավն է: Այդ իսկ պատճառով էլ դերասանները շատ գումար են վաստակում, ի տարբերություն ռեժիսորների ու սցենարիստների:

**- Ձեր ֆիլմերում, սակայն, հայտնի դերասաններ չեն խաղում, այլ հասարակ մարդիկ: Արդյոք չկար վախ, որ դրանք հանրության շրջանում այդքան հայտնի ու սիրելի չեն դառնա:**

- Ես չեմ ընկնում կոմերցիայի հետեւից, այլ իմ ֆիլմերում ներառում եմ հասարակ մարդկանց, որոնց միջոցով հաղորդակցությունն ավելի հեշտ է ստացվում:

Ներկայումս Գոդֆրի Ռեջջոն հաճախակի է դասախոսություններ կարդում փիլիսոփայության, տեխնոլոգիաների եւ կինոյի մասին:

ՄԱՆԱՆԱ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ

# «Գյումրի» եռալեզու գիրք-ալբոմ

**Շիրակի մարզկենտրոնի «Հոկտեմբեր» կինոթատրոնում հուլիսի 15-ին տեղի է ունեցել «Գյումրի» լուսանկարչական եռալեզու գիրք-ալբոմի շնորհանդեսը: Այն լույս է ընծայվել քաղաքապետարանի նախաձեռնությամբ, Գյումրին ԱՊՀ 2013 թվականի մշակութային մայրաքաղաք հռչակվելու առիթով եւ ներկայացնում է հանրապետության երկրորդ մեծ քաղաքի պատմաճարտարապետական, մշակութային հարուստ ժառանգությունը, նրա հայտնի մարդկանց եւ զբոսաշրջային գրավչությունները: Շնորհանդեսին ներկա են եղել քաղաքային եւ մարզային իշխանության, Գյումրու մտավորականության ներկայացուցիչներ, այստեղ այցելած հունական Սալոնիկ քաղաքի պատվիրակության անդամները՝ քաղաքապետ Յաննիս Բուտարիսի գլխավորությամբ:**

**Նման մի հրատարակության անհրաժեշտությունը Գյումրիում վաղուց էր զգացվում: «Գյումրի» եռալեզու գիրք-ալբոմը հրատարակվել է պետական միջոցներով, հինգ հազար օրինակ տպաքանակով, տեղի «Էլդորադո» հրատարակչությունում: Գրքույկը լավ նվեր կարող է լինել քաղաքի հյուրերին ու բոլոր այստեղ այցելողներին:**

**Գ. Մ.**

# Արթուր Ալեքսանյանն Ունիվերսիադայի 2-րդ մրցանակակիր

## *Ջուլֆալակյանը կրկին պարտվեց Վլասովին*

Կազանում ընթացող համաշխարհային ուսանողական 27-րդ խաղերում երեկ իրենց մրցավեճն ավարտեցին հունահռոմեական ոճի ըմբիշները: Մրցումների վերջին օրը Հայաստանից մրցագորգ դուրս եկան մեր 2 փորձառու ըմբիշները՝ Լոնդոնի օլիմպիական խաղերի արծաթե մրցանակակիր Արսեն Ջուլֆալակյանը (74 կգ) եւ Եվրոպայի կրկնակի չեմպիոն, օլիմպիական խաղերի բրոնզե մեդալակիր Արթուր Ալեքսանյանը, որոնցից մեդալների ակնկալիքներ կային:

Ավելի հաջող հանդես եկավ Արթուր Ալեքսանյանը: Առաջին երկու գոտեմարտերում նա միեւնույն 4-0 հաշվով պարտության մատնեց թուրք Սուլեյման Դեմիրչիին եւ լիտվացի Վիլիուս Լաուրինաիտիսին: Այդ հաղթանակների շնորհիվ հայ ըմբիշը կիսաեզրափակիչի ուղեգիր նվաճեց: Այդ փուլում էլ Արթուրն իրեն հիանալի դրսեւորեց եւ գրագետ վարելով գոտեմարտը, 3-1 հաշվով առավելության հասավ իրանցի Մահդի Ալիյարիֆելզաբադիի նկատմամբ:

Արթուր Ալեքսանյանն իրավունք ստացավ վիճարկելու Ունիվերսիադայի չեմպիոնի տիտղոսը: Եզրափակիչ գոտեմարտում նա մրցեց ռուսաստանցի Նիկիտա Մելնիկովի հետ: Ցավոք Արթուրին չհաջողվեց շարունակել հաղթարշավը եւ նվաճել Ունիվերսիադայի չեմպիոնի տիտղոսը: Հայ ըմբիշը մրցակցին զիջեց 0-5 հաշվով ու բավարարվեց արծաթե մեդալով: Այսպիսով, Կազանում հունահռոմեական ոճի հայ ըմբիշները նվաճեցին 2 արծաթե եւ մեկ բրոնզե մեդալ: Իսկ ընդհանուր առմամբ հայ մարզիկները Կազանում արժանացել են 10 մեդալի՝ 1 ոսկե, 5 արծաթե, 4 բրոնզե:

Արսեն Ջուլֆալակյանը մինչեւ 74 կգ քաշայինների մրցավեճում առաջին գոտեմարտում հաղթեց Ղրղզստանի ներկայացուցիչ Աթաբեկ Ազիկբեկովին (4-0): 2-րդ գոտեմարտում վիճակահանությամբ Արսենին բաժին էր հասել ռուսաստանցի Ռոման Վլասովը, որին հայ ըմբիշը պարտվել էր Լոնդոնի օլիմպիադայի եզրափակիչում: Ցավոք, պատմությունը կրկնվեց եւ Ջուլֆալակյանը կրկին զիջեց մրցակցին (1-3): Քանի որ վերջինս հասել էր մինչեւ եզրափակիչ, Արսենն իրավունք ստացավ մասնակցելու բրոնզե մեդալի համար պայքարին: Առաջին գոտեմարտը հաջող ստացվեց. Արսենը 3-0 հաշվով հաղթեց բելառուս Ալեքսանդր Դեմյանովիչին: Բրոնզե մեդալի համար վճռորոշ գոտեմարտում Ջուլֆալակյանը 4-0 հաշվով հաղթեց ադրբեջանցի Էլվին Մուրսալիեւին:



# Վանես Մարտիրոսյանի չեմպիոնական մենամարտը կկայանա նոյեմբերի 23-ին

**Պրոֆեսիոնալ բռնցքամարտի առաջին միջինքաշային կարգում հանդես եկող Վանես Մարտիրոսյանը նոյեմբերի 23-ին Մակաոյում կայանալիք մենամարտում WBO-ի վարկածով աշխարհի չեմպիոնի թափուր տիտղոսը կվիճարկի ամերիկացի Դեմետրիուս Անդրադեի հետ: Թեեւ մրցակիցները դեռեւս պայմանագիր չեն կնքել, սակայն կասկած չկա, որ մենամարտը կկայանա:**

**WBO-ի վարկածով աշխարհի չեմպիոնի տիտղոսը թափուր է մնացել, քանի որ չեմպիոնական գոտու տեր, ռուսաստանցի Զաուրբեկ Բայսանգուրովը վնասվածքի պատճառով չէր կարողացել հուլիսի 6-ին ռինգ դուրս գալ Անդրադեի հետ մենամարտելու: WBO-ի ղեկավարության որոշմամբ Մարտիրոսյան-Անդրադե մենամարտի հաղթողը հետագայում պետք է չեմպիոնի տիտղոսը պաշտպանի Բայսանգուրովի հետ մրցամարտում:**



**Ինչպես հայտնի է, Վանես Մարտիրոսյանը պրոֆեսիոնալ ռինգում առայժմ անպարտելի է: Նա անցկացրած 32 մենամարտերից 31-ում հաղթել է, մեկն ավարտել է ոչ-ոքի: Անդրադեն եւս պարտություն չունի, նա շահել է բոլոր 19 մենամարտերը:**

# Աղվան Մկրտչյանը կխաղա «Գանձասարում»

**Օրերս «Միկայից» հեռացած Աղվան Մկրտչյանը 1 տարվա պայմանագիր է կնքել Կապանի «Գանձասարի» հետ: Վերջինս նախապատրաստական շրջանում զգալիորեն համալրել է կազմը: Թիմում ընդգրկվել են նաեւ Շոթա Զիքիան, Արտակ Գրիգորյանը, Արթուր Բարսեղյանը:**

# «Արարատում» 4 դարպասապահներ հանդես կգան

**Երեւանի «Արարատը» նոր մրցաշրջանում 4 դարպասապահ կունենա: Մի քանի օր առաջ «Արարատի» հետ պայմանագիր էր կնքել Մանվել Աֆրիկյանը, այժմ էլ թիմի կազմում ընդգրկվել է ՀՀ հավաքականի նախկին դարպասապահ Գրիգոր Մելիքսեթյանը: Թիմի 35-ամյա դարպասապահ Մայիս Ազիզյանն էլ Իրանում փորձաշրջան անցնելուց հետո վերադարձել է «Արարատ»: 4-րդ դարպասապահն Արսեն Պետրոսյանն է, որն անցյալ մրցաշրջանում էր «Փյունիկից» տեղափոխվել «Արարատ»: Այնպես որ «Արարատի» դարպասը պաշտպանելու հարցում դարպասապահների միջեւ սուր մրցակցություն կծավալվի:**

# Կառլոս Տեւեսը կարիերան կշարունակի «Յուվենտուսում»

**Անգլիայում 7 մրցաշրջան անցկացնելուց հետո արգենտինացի հարձակվող Կառլոս Տեւեսը լքեց «Մանչեսթր Սիթին» ու տեղափոխվեց Թուրինի «Յուվենտուս»: Նա 3 տարվա պայմանագիր է կնքել «Յուվենտուսի» հետ: Իտալական ակումբը Տեւեսի տեղափոխության դիմաց 9 մլն եվրո է վճարել: Տեւեսը նոր թիմում կխաղա 10 համարի մարզաշապիկով:**

**Տեւեսը որպես բարձրակարգ ֆուտբոլիստ ձեւավորվել է արգենտինական «Բոկա Խունիորսում», որտեղից տեղափոխվել է բրազիլական «Կորինթիանս»: 2006-ին Տեւեսն ընդունեց անգլիական «Վեստ Հեմի» առաջարկը: Այնուհետեւ արգենտինացի ֆուտբոլիստը կրեց «Մանչեսթր Յունայթեդի» մարզաշապիկը: Վերջինիս կազմում Կառլոսը հիմնականում փոխարինման էր դուրս գալիս: Չնայած դրան, նա 19 գոլ խփեց, 2 անգամ նվաճեց Անգլիայի չեմպիոնի տիտղոսը, դարձավ երկրի գավաթակիր եւ չեմպիոնների գավաթակիր:**

**2009/10-ին նա տեղափոխվեց «Մանչեսթր Սիթի» եւ որպես թիմի ավագ ստացավ Անգլիայի գավաթը: Մեկ տարի անց Տեւեսը թիմի հետ նվաճեց երկրի չեմպիոնի տիտղոսը: «Մանչեսթր Սիթիում» նա անցկացրեց 113 խաղ ու խփեց 58 գնդակ: Կառլոս Տեւեսն Արգենտինայի հավաքականի կազմում 62 խաղ է անցկացրել:**

ՈՒՆԻՎԵՐՍԻԱԴԱ-2013

# Հայ սամբիստները 2 բրոնզե մեդալ նվաճեցին

**Կազանում ընթացող համաշխարհային ուսանողական խաղերում հայ սամբիստները 2 բրոնզե մեդալ նվաճեցին: Մինչեւ 82 կգ քաշային կարգում 3-րդ մրցանակակիր դարձավ Միհր Կարապետյանը: Առաջին գոտեմարտում նա պարտություն կրեց վրացի Նիկո Կուցիայից (1-2): Քանի որ վերջինս հասավ մինչեւ եզրափակիչ, ուստի հայ սամբիստն իրավունք ստացավ պայքարելու բրոնզե մեդալի համար: Այդ պայքարում հաջողությունն ուղեկցեց Միհր Կարապետյանին: Հաջորդաբար հաղթելով ուկրաինացի Սերգեյ Գոնչուկին (4-0) եւ լիտվացի Ռադվիլաս Մատուկասին (1-0), Միհրը բրոնզե մեդալ նվաճեց:**

**Գրեթե նույնպիսի սցենարով անցան ծանրքաշային Հակոբ Առաքելյանի գոտեմարտերը: Առաջին գոտեմարտում նա հաղթեց վրացի Ռոստոմի Խախալեյշվիլուն (2-0), իսկ 2-րդում պարտության մատնեց ադրբեջանցի Էլշան Ջաֆարլիին (4-1): Կիսաեզրափակիչում հայ սամբիստի մրցակիցը ռուսաստանցի Ալեքսանդր Կուչումովն էր: Վերջինս ուժեղ գտնվեց հայ սամբիստից եւ հաղթելով 12-4 հաշվով, մտավ եզրափակիչ: Իսկ Առաքելյանը բրոնզե մեդալի համար պայքարում առավելության հասավ կորեացի Յոն Հոպիոյի նկատմամբ (2-1):**

# Զավեն Անդրեասյանն արժանացավ արծաթե մեդալի

**Ունիվերսիադայի շախմատի մրցաշարում հաջող հանդես եկավ գրոսմայստեր Զավեն Անդրեասյանը՝ դառնալով փոխչեմպիոն: Ավարտական տուրից առաջ հայ շախմատիստը 5 գրոսմայստերների հետ 6 միավորով գլխավորում էր աղյուսակը: Ավարտական տուրում Զավենը հաշտություն կնքեց Վեսլի Սոյի հետ ու վաստակեց 6,5 միավոր: Ոչ-ոքի ավարտվեցին նաեւ մյուս առաջատարների միջեւ կայացած հանդիպումները: Արդյունքում միանգամից 9 շախմատիստներ վաստակեցին 6,5-ական միավոր: Մեդալների տերերին որոշելու համար ստիպված էին դիմել լրացուցիչ գործակիցների օգնությանը: Չնչին առավելությամբ Ունիվերսիադայի չեմպիոն հռչակվեց ֆիլիպինցի Վեսլի Սոն: Զավենին բաժին հասավ արծաթե մեդալը, իսկ բրոնզե մրցանակակիր դարձավ չինացի Լի Չաոն:**

**Ունիվերսիադայում Հայաստանի 2-րդ ներկայացուցիչ Ռոբերտ Հովհաննիսյանը 6 միավորով գրավեց 10-րդ տեղը: Նա 9-րդ տուրում հաղթեց Մակսաս Աթաբաեւին: Զավեն Անդրեասյանը մրցաշարում անպարտելի մնաց, իսկ Ռոբերտը միակ պարտությունը կրեց 8-րդ տուրում Մաքսիմ Մատլակովից:**



# Դարչինյանը խոստացել է ոչնչացնել Դոներին

**Օրեր առաջ հայտնի պրոմոութեր Բոբ Արումը հայտարարել էր, որ նոյեմբերին կկազմակերպի Վախթանգ Դարչինյանի եւ Նոնիտո Դոների երկար սպասված ռեւանշ-մենամարտը: Սակայն ֆիլիպինցի բռնցքամարտիկը հայտարարել է, որ ինքը տեղափոխվում է կիսամիջինքաշային կարգ, ուստի 2-րդ թեթեւքաշային կարգում Դարչինյանի հետ մենամարտի անցկացումը հնարավոր չէ:**

**Այս հայտարարությունը զայրացրել է Վախթանգ Դարչինյանին, որն իրեն հատուկ ոճով շատ կոշտ է արտահայտվել Դոների մասին. «Էական չէ, թե այս անգամ ինչպիսի պատճառաբանություններ են բերում մենամարտից խուսափելու համար, միեւնույնն է, քեզ նոկաուտի են ենթարկելու: Քաշի հետ խնդիրներ չունենալու համար խթանիչներ մի օգտագործիր: 6 տարի շարունակ քեզանից ռեւանշ եմ պահանջել: Կրկին հիշեցնեմ, որ ես եմ քեզ անվանի բռնցքամարտիկ դարձրել, ես էլ կոչնչացնեմ քեզ»:**

**Վախթանգ Դարչինյանը պրոֆեսիոնալ ռինգում 45 մենամարտերից 39-ում հաղթել է, 1-ն ավարտել է ոչ-ոքի, 5-ում պարտվել է: Վերջին մենամարտը Դարչինյանն անցկացրել է այս տարվա մայիսի 11-ին Խավիեր Գալոյի հետ: Հայ բռնցքամարտիկն արդեն 4-րդ ռաունդում նոկաուտի ենթարկեց մրցակցին:**

# Կարեն Մովսիսյանը գրավեց 22-րդ տեղը

**Իտալական Բենասկում անցկացված շախմատի մրցաշարում Կարեն Մովսիսյանը 9 հնարավորից վաստակած 7 միավորով գրավեց 22-րդ տեղը: Ավարտական տուրում նրա մրցակիցը՝ Վլադիմիր Մինկոն չներկայացավ հանդիպմանը եւ հայ գրոսմայստերի օգտին հաղթանակ գրանցվեց: Մրցաշարի հաղթող ճանաչվեց Վենեսուելայի ներկայացուցիչ Էդուարդո Իտուրիզագան, որը վաստակեց 8,5 միավոր եւ լրացուցիչ գործակիցներով գերազանցեց Մաքսիմ Ռոդշտեյնին ու Ալեքսանդր Դելչեւին:**

# «Ռեալն» աշխարհի ամենաթանկ ակումբն է

**Ամերիկյան «Ֆորբս» հանդեսի տվյալներով Մադրիդի «Ռեալն» աշխարհի ամենաթանկ մարզական ակումբն է: Այն գնահատվում է 3,3 մլրդ դոլար: Իսպանական ակումբն անցած տարի մարզաշխարհում ամենամեծ եկամուտն է ունեցել (650 մլն դոլար): Նախորդ 3 տարիներին այդ ցուցանիշն աճել է 62 տոկոսով:**

**2-րդ տեղում անգլիական «Մանչեսթր Յունայթեդն» է, որի արժեքը 3,165 մլրդ դոլար է: Լավագույն եռյակը եզրափակում է «Բարսելոնը»՝ 2,6 մլրդ դոլար: 4-9-րդ տեղերում են բեյսբոլի եւ ամերիկյան ֆուտբոլի ակումբները: Լավագույն տասնյակը եզրափակում է Լոնդոնի «Արսենալը»՝ 1,326 մլրդ դոլար: Իսկ չեմպիոնների գավաթակիր Մյունխենի «Բավարիան» 1,309 մլրդ դոլարով աշխարհի ամենաթանկ ակումբների շարքում 12-րդ տեղում է:**

*Էջը պատրաստեց* ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

ԱԶԳ

# Օրվա հետքերով

# Կոչ աշխարհասփյուռ հայության 10 միլիոն հասցեներով

## *Փրկենք հայոց հուշարձանները*

**Հարգարժան բարեկամ,**

Այս կոչիս նպատակը պատմական Հայաստանի եւ մասնավորապես Արեւմտյան Հայաստանի տարածքում տարի առ տարի ավերվող-անհետացող հայոց հուշարձանների վերջնական կործանումից փրկության մտահոգությունն է: Հուշարձաններ, որոնք հայ ժողովրդի ստեղծած նյութական ժառանգության կարեւորագույն արժեքներից են: Բազմաթիվ անհերքելի փաստերի վկայությամբ՝ Հայոց Մեծ Եղեռնից հետո անխնամ մնացած մեծ ու փոքր այդ արժեքները պարբերաբար եւ անարգելի ենթարկվում են գանձախուզությունների ու ավերումների, հիմնահատակ ու ծրագրված կործանումների ու պայթեցումների:

Դարերի թոհուբոհից դեռեւս մեր օրերը հասած VII-XIX դդ. շատ ու շատ վանքերի ու եկեղեցիների, նրանց համալիրների մեջ մտնող շինությունների հիմնապատերի արտաքին շարվածքների քարերը՝ հիմքերից 1,5-2 մ եւ ավելի բարձրություններով, պոկված-հանված են, գերեզմանոցները՝ գրեթե իսպառ վերացվել են, տապանաքարերն ու խաչքարերը, հուշարձանապատկան քարերը օգտագործվել կամ օգտագործվում են զանազան շինարարություններում...

Այդ հսկայածավալ ժառանգության մեծ մասը թերեւս վերջին 40-50 տարիներում փաստագրված են, դեռեւս՝ առանձին բացառություններով, չեն ենթարկվել հիմնարար եւ բազմակողմանի ուսումնասիրությունների, որոնց զգալի մասը նույնիսկ ծանոթ չեն մասնագետներին, հայ ժողովրդի պատմության ու մշակույթի հայ եւ օտարազգի ուսումնասիրողներին:

Այսպիսի ողբալի վիճակում գտնվող այժմյան Թուրքիայի տարածքի հայոց հուշարձանները կամ նրանց գերակշիռ մասը, պարբերաբար ենթարկվելով մարդու եւ բնության կործանարարությանը, կարող են դիմակայել եւս 20-50 տարի:

Մենք՝ Հայաստանի, Արցախի հանրապետությունների քաղաքացիներս եւ աշխարհասփյուռ հայությունը, մեր պետական եւ ազգային կառույցները, մեզնից յուրաքանչյուրը ոչ մի բարոյական ու իրավական իրավունքը չունի իր նպաստը չբերելու հայոց նյութական ժառանգության այդ հատվածի (նաեւ այլ պետությունների տարածքներում գտնվող) գլխին կուտակված վտանգի դեմն առնելու, այն՝ ըստ հնարավորինս կանխելու գործին: Սա ուղղակի պետական ու ազգային արժանապատվության խնդիր է եւ այդ խնդրում մեզանից ոչ ոք իրավունք չունի անտարբերություն ու կրավորականություն ցուցաբերելու: Այնպես, ինչպես մենք ազգովին ու պետականորեն, լուռումունջ մնալով դա թույլ տվեցինք, բացաչք կուրությամբ ականատես եղանք 1989-2006 թթ. Ադրբեջանի կողմից հայոց Նախիջեւան աշխարհի ողջ հայկական ժառանգության կործանմանը, որի ընթացքում գետնի երեսից իսպառ վերացվեցին շուրջ 27 հազարի հասնող մեր ժողովրդի ստեղծած նախիջեւանյան բոլոր մեծ ու փոքր հուշարձանները:

Ի վերջո սթափվենք... Սթափվենք պետականորեն, ազգայնորեն, իրական եւ ոչ թե ճառաբան ու բաժակաճառային հայրենասիրությամբ, արտացավ ու գործունյա եւ ոչ թե ցուցադրական ու ցուցամոլական մեկենասություններով...

Հարգարժան բարեկամ,

Հաշվի առնելով Հայաստան-Թուրքիա չկարգավորվող պետական հարաբերությունները, ինչպեսեւ հուշարձանների պահպանության խնդիրների ստեղծված առկա եւ օրեցօր վատթարացող խիստ վտանգավոր վիճակը, անհրաժեշտություն է, որպեսզի այդ խնդիրներին ինչ-որ կերպով լուծում տալու համար ստեղծվի հայկական հուշարձանների պահպանության համահայկական միջազգային կառույց (կազմակերպություն, հիմնադրամ, ասոցիացիա): Այն պետք է լինի ոչ պետական եւ գործի ուրույն կանոնադրությամբ, վայելի ՀՀ պետական մարմինների, Արցախի, Սփյուռքի ազգային կառույցների, հայոց եկեղեցու հովանավորությունն ու աջակցությունը:

1. Իմ համոզմամբ ստեղծվելիք այս կառույցի կենտրոնական գրասենյակը պետք է իր պետական գրանցումը ստանա եւ գործի Հայաստանի Հանրապետությունից դուրս՝ եվրոպական երկրներից մեկում (այդ թվում եւ Թուրքիայում):

2. Կառույցը իր մասնաճյուղ-գրասենյակները պետք է ունենա աշխարհի այն բոլոր երկրներում (այդ թվում եւ ՀՀ-ում եւ Արցախում), որտեղ առկա են հայկական համայնքները:

3. Կառույցի դրամական միջոցները պետք է գոյանան հայկական բոլոր ազգային կազմակերպությունների, ՀՀ եւ Արցախի պետական եւ մասնավոր ձեռնարկությունների, ընկերությունների, եկեղեցու, անհատ նվիրատուների, մեծահարուստների ու գործարարների ներդրած մուծումներից:

4. Կառույցը իր գործունեությամբ պետք է կատարի.

ա) Հուշարձանների պահպանություն (կատարելով պահպանության ծառայություններին ամենամսյա վճարումներ):

բ) Մանրամասնորեն փաստագրի մեր օրերը հասած հուշարձանների վավերագրական վիճակը:

գ) Միջոցներ ձեռնարկի հուշարձանների ամրակայման եւ առանձին դեպքերում նաեւ նորոգումների ու բարեկարգումների աշխատանքներ իրագործելու համար:

դ) Կատարի հրատարակումներ (հաշվետվություններ, գիտահանրամատչելի գրականություն, ուսումնասիրություններ):

Նշածս կառուցվածքային ու կատարողական այս կետերը նախնական-ծրագրային են, որոնք ըստ կարգի իրենց հաստատումը, լրացումները ու ճշգրտումները պետք է ստանան հիմնադրվելիք կառույցի հիմնադիր ժողովում եւ նրա կանոնադրությունում: Իսկ այս ամենին ընթացք տալու եւ կազմակերպելու համար անհրաժեշտ է ձեւավորել-կազմել կառույցի հիմնադիր ժողով-հավաքի աշխատանքները իրականացնող ձեռնհաս մասնագիտական նախաձեռնող խումբ:

Նախաձեռնող խմբի ձեւավորումը պետք է կատարվի կամավորական հիմունքներով՝ Հայաստանի, Արցախի եւ Սփյուռքի մասնագիտական ու հասարակական կազմակերպությունների, գիտական ու ազգային կառույցների, մտավորականության, արվեստի ու մշակույթի ներկայացուցիչներից: Մարդիկ, ովքեր իրենց անբասիր ու անաղարտ կենսագրություններով ու իրենց գործունեությամբ գտնում են, որ իրենք կարող են օգտակար լինել թե՛ նախաձեռնող խմբի եւ թե՛ կառույցի ձեւավորող ստորաբաժանումների աշխատանքներին:

Անձնապես շատ լավ եմ պատկերացնում առաջարկվող կառույցի ստեղծման թե՛ դժվարությունները եւ թե՛ մանավանդ նրա գործունեության իրականացման բազմազան ու բազմաթիվ, նույնիսկ անհաղթահարելի դժվարությունները: Նախապես ականջալուր եմ եւ տեսնում եմ նաեւ շատերի անտարբերությունը, նույնիսկ արհամարհական ու ժխտողական վերաբերմունքը՝ «բան չի ստացվի», «անօգուտ եւ անիմաստ է, հեռանկար չունի», «էլի մի համահայկական կառույց», «դա պետք է պետությունը ձեռնարկի», «այս խնդիրները ՀՀ-ում ինչպես հարկն է չենք կարողանում իրականացնել, էլ ուր մնաց դրսում» եւ այլ ոչ անհիմն դիրքորոշումները... Այնուհանդերձ, գտնում եմ, որ ստեղծվելիք կառույցը թերեւս միակ ուղին է, որպեսզի մենք սթափ մտածելով, առկա սպասվելիք դժվարությունների հաղթահարումների հավատով՝ թեկուզեւ այսքան ուշացումով, ձեռնամուխ լինենք մեր հուշարձանները կործանումից փրկելու սրբազան ու համահայկական գործին: Անշուշտ դժվար է լինելու կառույցի աշխատանքը: Այնպես որ մեզանից բացի ոչ ոք պարտավոր չէ, մեր ժողովրդի ժառանգության պահպանության դժվարին լծի տակ մտնելու...

Կկազմակերպե՞նք, կաշխատե՞նք, մեր ունեցած միջոցներից մասնահանումներ կանե՞նք, մեր հոգու ու ոգու պարտքը կկատարե՞նք մեր ապուպապերի ու նրանց ստեղծած-թողածը արժանավայել պահել-պահպանելու եւ ապագա սերունդներին հանձնելու համար... Այդ դեպքում գուցեեւ մեզ հաջողվի թերեւս փրկենք ինչ-որ չափ ու քանակով մեր մունջ ու աղեկտուր ճիչերով օգնություն աղերսող հուշարձանները...

Հակառակ պարագայում՝ առաջիկա տասնամյակներում հազար-հազար ափսոսանքներով ու կսկիծներով, վիճակագիր-հաշվապահների նման կարձանագրենք նրանց կործանումների հաշիվ-հաշվարկները, կմնանք անցյալով հպարտանալու մարմաջի գերին... Եվ այդ դեպքում մեր այժմյան անտարբերություն-անգործությունը կդառնա պատմական ու ազգային անանց ամոթ... հազար ամոթ ...

Նախատեսվում է նախաձեռնող խմբի առաջին նիստը գումարել Երեւանում 2013 թ. նոյեմբերի 15-ին, ժամը 15-ին, Հայաստանի ճարտարապետների միության փոքր դահլիճում: Մինչ այդ՝ նախաձեռնող խմբում աշխատելու համար, ցանկացողները, ինչպեսեւ կազմակերպությունների ներկայացուցիչները իրենց թեկնածությունները պետք է առաջադրեն գրավոր՝ Սերգեյ Փարաջանովի թանգարան, էլ. փոստ parajanovmuseum@gmail.com հեռ. +374 10 53 84 73: Խնդրվում է թեկնածությունները ներկայացնելիս անպայման ներկայացվեն թեկնածուների կապի միջոցները (էլեկտրոնային հասցեն եւ հեռախոսահամարները):

Ակնկալում եմ, որ այս կոչը կկարեւորեն եւ կհրապարակեն թե Հայաստանի եւ թե Սփյուռքի թերթերը եւ այլ լրատվամիջոցները: Լրացուցիչ տեղեկությունների համար կապ կարելի է պահպանել տողերիս հեղինակի հետ հետեւյալ կապի միջոցներով՝ էլ. փոստ - argamaivazian@aol.com, հեռ. +374-091-78-80-33:

**ԱՐԳԱՄ ԱՅՎԱԶՅԱՆ**
**Հայագետ-նախիջեւանագետ**
**ՀՀ մշակույթի վաստակավոր գործիչ**
**17 հուլիս, 2013**
**Երեւան**

ԼՈՒՅՍ Է ՏԵՍԵԼ

# «Ամբողջովին անպաշտոնական. Ռ. Լեմկինի ինքնակենսագրությունը»

**«Արմինյըն միրոր-սփեքթեյթր» շաբաթաթերթի փոխանցմամբ, Եյլի համալսարանը օրերս լույս է ընծայել միջազգային իրավունքի ոլորտում ճանաչված հեղինակություն, իրավաբանական եզրերի եւ մասնավորապես «ցեղասպանություն» բառը հորինող Ռաֆայել Լեմկինի մինչ օրս անտիպ մնացած ինքնակենսագրությունը:**

**Երբ 1959-ին խաղաղության Նոբելյան մրցանակի արժանացած Լեմկինը մահացավ, նրա ինքնակենսագրությունը դեռ անավարտ էր, եւ միայն վերջերս հրեա պատմաբան Ֆրիզն է նրա ձեռագրերը թվայնացնելու գործընթացում կարողացել ի մի բերել կենսագրության պատառիկները եւ հրատարակել մի հատորում:**

**Լեմկինի պատմությունը սկսվում է հիշողություններով Լիտվայից, որտեղ իր կյանքի վաղ տարիներին նա մեծ հետաքրքրություն է ցուցաբերում շրջապատող աշխարհի նկատմամբ եւ անհագորեն կարդում խմբակային հետապնդումների մասին պատմական գրքեր: Հետագայում որպես դատախազի տեղակալ աշխատելով Վարշավայում՝ նա խորամուխ է լինում Հայոց ցեղասպանության մանրամասնություններին: Ցեղասպանության իրական պատկերը առավել ցայտուն է դառնում, երբ ստիպված հեռանում է Լեհաստանից, որտեղ ընտանիքը զոհ է դառնում գերմանացի նացիստների վայրագություններին: Ամերիկայում հաստատվելուց հետո, նա կորցնում է իր առողջությունը եւ ֆինանսական կայուն վիճակը՝ օրնիբուն աշխատելով աշխարհին իրազեկելու ցեղասպանության վտանգների մասին: Նրա տքնաջան աշխատանքներն իրենց արդյունքը տվեցին, երբ ՄԱԿ-ը վավերացրեց Ցեղասպանության կոնվենցիան: Բայց Լեմկինը իր կյանքի մնացած մասն անցկացրեց մենակության եւ աղքատության մեջ:**

**«Totally Unofficial, The Autobiography of Raphael Lemkin» հատորը առինքնող պատմությունն է մի մարդու, որն անձնականը մոռանալով եւ բազմաթիվ խոչընդոտներ հաղթահարելով՝ իր կյանքը նվիրում է խմբակային ինքնությունն ու մշակութային ժառանգությունը պահպանելու իրավական եզրերի սահմանումը տալու դժվարին գործին:**

ՎԱՇԻՆԳՏՈՆ

# «Ճանապարհորդություն դեպի Ամասիա» ֆիլմը Կապիտոլ Հիլում




**2011-12 թվերին մրցանակների արժանացած Էրիկ Վ. Խաչիկյանի եւ Ռանդի Բելի «Ճանապարհորդություն դեպի Ամասիա» վավերագրական ֆիլմը հուլիսի 24-ին ցուցադրվելու է Կապիտոլ Հիլում, տեղեկացնում է այդ առթիվ Ամերիկայի Հայ ազգային (Հայ դատի) կոմիտեից ստացված հաղորդագրությունը:**

**Ֆիլմը պատմում է դեպի իր պապենական հայրենիքը՝ Ամասիա (Թուրքիա) կատարած երգահան Էրիկ Խաչիկյանի ուղեւորության մասին, մոտ հարյուր տարի անց այն օրվանից, երբ օսմանցի զինվորները ստիպեցին նրա տատիկին՝ Հելեն Շուշանին, տարագրվել իր ընտանիքի հետ եւ բռնել աքսորի ճամփան: Էրիկը Ամասիայի մասին լսել է տատիկից, ով խոստացել է մի օր անձամբ ուղեկցել նրան այնտեղ:**

**Մի ընտանիքի պատմության հետքերով ֆիլմը փորձում է ավելի խոր հասկանալ հարաբերությունները հայերի եւ թուրքերի միջեւ:**

**«Ֆիլմը ցնցող է, որովհետեւ բարձրաձայնում է այդ աննկարագրելի ողբերգության մասին, միաժամանակ վեր է հանում հայերի վերապրելու խիզախությունը, որն ամեն խրախուսանքի արժանի է: Որպես հայկական հարցերով զբաղվող կոնգրեսական համախմբման համանախագահ ես ողջունում եմ այս ֆիլմը, որը փորձում է վառ պահել մարդկանց հիշողության մեջ հայերին պատուհասած ցեղասպանությունը: Եթե մենք առաջ ենք շարժվելու, ապա պարտավոր ենք դասեր քաղել այդ ողբերգությունից եւ երբեք չմոռանալ բոլոր նրանց, ովքեր զոհ գնացին դրան: Ես հպարտ եմ, որ պատվին ունեմ ներկայացնելու այս ֆիլմը կոնգրեսականներին», ասել է Մայքլ Գրիմը (հանրապետական Նյու Յորքից):**

**ՀՀ Արվեստի տարբեր ոլորտները եւ հատկապես ֆիլմերը չափազանց արդյունավետ միջոց են հաղորդակցվելու կոնգրեսականների հետ: Շնորհակալ ենք կոնգրեսական Գրիմին եւ նաեւ ֆիլմի հեղինակներին», նշել է Հայ դատի կոմիտեի գործադիր տնօրեն Արամ Համբարյանը:**

Հ. Ծ.

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60, 060 271112

Լրատուական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 04 Ա N 047261, տրուած՝ 18.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան 16.7.2013, գինը՝ 100 դրամ, տպագրւում է «Տիգրան Մեծ» հրատարակչութեան տպարանում՝ Արշակունեաց 2: